



ՔՀԿ հետազոտական կարողությունների զարգացում

ՔՀԿ հետազոտական
կարողությունների
գործնական
զարգացման
ուղեցույց

Բալասանյան Ս.
Վարդանյան Ն.

Բովանդակություն

1. Հետազոտական տրամաբանության կանոնները.....	4
1.1. Հետազոտությունների տեսակները	4
1.2. Քանակական տրամաբանություն.....	5
1.3. Որակական տրամաբանություն.....	7
1.4. Որակական և քանակական տրամաբանությունների համադրո՞ւմ.....	8
1.5. Ո՞վ է հետազոտողը և հետազոտական էթիկա	10
1.6. Հետազոտական հիմնախնդիրներ և գրականության վերլուծություն.....	14
1.7. Վարկածների ձևակերպման առանձնահատկությունները.....	16
1.8. Հետազոտական նախագիծ.....	18
2. Հետազոտության մեթոդներ. որակական	20
2.1. Խորքային հարցազրույց.....	21
2.2. Փորձագիտական հարցում	24
2.3. Խմբային հարցազրույց, ֆոկուս խմբային քննարկում.....	26
2.4. Փաստաթղթերի վերլուծություն.....	34
2.5. Դիտարկում	35
2.6. Որակական տվյալների վերլուծություն և ներկայացում.....	37
3. Հետազոտության մեթոդներ. քանակական	41
3.1. Հասարակական երևույթների զանգվածային բաշխումը որպես բնական երևույթ. Գալթոնի տուփի «հաղորդագրությունը» հետազոտողներին	42
3.2. Հարցաթերթ. ինչպե՞ս կազմել: Հարցի ձևակերպումը, տեսակները.....	44
3.3. Ներկայացուցչականություն, պատահական թվերի աղյուսակ և ընտրանքի հաշվիչ.....	51
3.4. Քանակական տվյալների մշակում, վերլուծություն և ներկայացում:.....	54
3.5. Քանակական հետազոտական տվյալների համակարգչային վերլուծության ծրագրեր.....	56
Հղումներ	58

Հարգելի՛ ՔՀԿ ներկայացուցիչներ,

Հաշվի առնելով արդի աշխարհում տեղեկատվական հոսքերի ուժգնությունը, ինչպես նաև հետազոտության կարևորությունը՝ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)–Հայաստան հիմնադրամը, ՀԿ Դեպո ծրագրի շրջանակներում, նախաձեռնեց այս առցանց ձեռնարկի ստեղծումը:

Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ վերջին տարիներին Հայաստանում գործառնող քաղաքացիական հասարակական կազմակերպությունները (ՔՀԿ) հետազոտություններ իրականացնելու կարիք են զգում: Հետազոտության և հետազոտական հմտությունների կարիք է առաջանում նաև սոցիալական իրականության միջամտության/բարեփոխման ծրագրեր մշակելիս:

Այս առցանց ձեռնարկը հասցեագրված է հետազոտական կարիքներ ունեցող հայաստանյան ՔՀԿ ներկայացուցիչներին, որոնք մտադիր են զարգացնել իրենց հետազոտական կարողությունները:

Այս առցանց ձեռնարկը, որ պարունակում է բազմաթիվ էլեկտրոնային հղումներ, ժամանակի ընթացքում կզարգացվի՝ հիմնվելով ՔՀԿ ներկայացուցիչների արձագանքի ու խորհուրդների վրա: Ուստի, ակնկալում ենք, որ այս ձեռնարկի հրատարակմամբ կմեկնարկի այն կիրառելու արդյունավետ գործընթաց ու երկխոսություն: Ձեր կողմից ձեռնարկն օգտագործելու ու Ձեր արձագանքի շնորհիվ այն կարող է անընդհատ կատարելագործվել՝ Ձեզ դարձնելով ձեռնարկի համահեղինակներ: Մենք ակնկալում ենք, որ այս ձեռնարկի առցանց հրատարակմամբ Ձեզ ենք փոխանցում ոչ թե վերջնական ուղեցույց, այլ անընդհատ զարգանալու միտում ունեցող ու «ապրող» հարթակ՝ այնպիսին, ինչպիսին ինքը սոցիալական հետազոտությունն է:

Հայաստանյան ՔՀԿ-ների շրջանում նոր ու որակյալ հետազոտական աշխատանքների ակնկալիքով ու շնորհակալությամբ՝

ՀՌԿԿ-Հայաստան



people?

vision

STRATEGY

development

1. Հետազոտական տրամաբանության կանոնները

Չկա «հետազոտություն» հասկացության մեկ ու ամբողջական, վերջնական սահմանում: Պատճառը գուցե այն է, որ հետազոտության տեսակները տարբեր են կամ սոցիալական հետազոտությունն (ու հետազոտվող իրականությունն) այնքան բազմազան է, որ դժվար է այն միանշանակորեն սահմանել:

Պարզ սահմանումներում (Merriam-Webster, 2017) «հետազոտությունը» ներկայացվում է որպես համակարգված գործողությունների ամբողջություն, շարք, հաջորդականություն, որի նպատակն է փաստերի բացահայտումն ու մեկնաբանությունը, վարկածների հաստատումը/հերքումը, տեսական և գործնական հայացքների վերանայումը: Հաշվի առնելով հետազոտության կարևորությունը քաղաքականությունների իրականացման համար՝ այն սահմանվում է նաև որպես քաղաքականությունների ուղղորդման միջոց (Becker, Bryman and Ferguson, 2012): Հենց այս տեսանկյունից են ՔՀԿ-ները կարևորվում որպես հետազոտական տվյալների կիրառող և հետազոտությունների նախաձեռնող ու իրականացնող կողմեր:

Մեծ մասամբ, հետազոտությունը որոշակի թեմայով կամ որոշակի երևույթի մասին տեղեկատվության հավաքագրման գործընթացն է:

Ըստ Սթինհաուզի (1978), հետազոտությունը համակարգված հարցադրումների ամբողջություն է, որը (որից ստացված տեղեկատվությունը) հրապարակայնացվում է:

1.1. Հետազոտությունների տեսակները

Հետազոտությունը կարող է դասակարգվել ամենատարբեր հիմքերով՝

- ✓ ըստ այդ հետազոտության շրջանակներում կիրառված մեթոդների,
- ✓ ըստ այն գիտելիքի, որը հետազոտությունը նպատակ ունի ստեղծելու/վերհանելու, ըստ այն թիրախային խմբի, որին հետազոտությունն ուղղված է,
- ✓ ըստ հետազոտության հիմնախնդրի և այլն:

Ընդհանուր առմամբ, որպես ամենատարածված դասակարգում, առանձնացվում են **որակական** և **քանակական** հետազոտությունները: Դրանք տարբերվում են իրականացման տրամաբանությամբ ու սկիզբ են առնում հակադիր տեսական մոտեցումներից (տե՛ս այս ուղեցույցի 1.1. և 2.1. բաժինները և երկրորդ գլուխը):

Հետազոտությունները դասակարգվում են նաև ըստ իրենց նպատակի՝ լինելով **հետախուզական, նկարագրական ու բացատրական**: Սա կախված է հետազոտվող հիմնախնդրի ուսումնասիրման աստիճանից:

Եթե հիմնախնդիրը նախկինում դեռ չեն ուսումնասիրել կամ շատ քչերն են այն ուսումնասիրել կամ հիմնախնդիրն ինքնին նոր է ի հայտ եկել, ապա, ամենայն հավանականությամբ, կիրականացվի **հետախուզական** հետազոտություն:

Եթե հիմնախնդիրը դեռևս ուսումնասիրված չէ այնքան, որ այն հնարավոր լինի հասկանալ ու նկարագրել, ապա կիրականացվի **նկարագրական** հետազոտություն, որը կօգնի տեսնել, հասկանալ, իմանալ հիմնախնդիրը:

Եթե հիմնախնդիրը հարկավոր է բացատրել՝ վերհանել դրա առաջացման պատճառահետևանքային կապեր, ապա կիրականացվի **բացատրական** հետազոտություն: Այսինքն, բացատրական հետազոտությունը նկարագրական հետազոտությունից առավել «առաջ է» անցնում՝ հասկանալու ու ներկայացնելու համար հիմնախնդրի ավելի խորքային առանձնահատկությունները:

Հետազոտության տեսակ է **պիլոտային** հետազոտությունը: Այն իրականացվում է առավել փոքր ծավալով, մինչև որ կսկսվի բուն հետազոտությունը: Այն իրականացվում է հասկանալու համար՝ արդյոք մեր հարցաթերթը լավ է կազմված, արդյոք հարցազրույցը տևում է այնքան, ինչքան ակնկալում ենք, արդյոք հետազոտությունն ընթանում է մեզ համար կանխատեսելի ձևով և այլն:

1.2. Քանակական տրամաբանություն

Հետազոտողների մի մասը՝ քանակական հետազոտողների թևը, հետազոտական հավատալիք ունի առ այն, որ գիտելիքը ձևավորվում է միայն փորձից ու ճշմարիտ է այն գիտելիքը, որը ենթարկվում է ճշգրիտ տրամաբանությանը, հիմնվում է մաթեմատիկական ու վիճակագրական հաշվարկների վրա: Այսինքն, այս մոտեցմամբ, ընդունվում է հասարակական իրականության օբյեկտիվ լինելն ու փորձ է արվում այդ իրականության մասին ճշգրիտ գիտելիքներ ձևավորելու:

Քանակական հետազոտողները հավատում են, որ հետազոտողի ու նրա կողմից հետազոտված իրականության միջև կապ չկա ու լավն է այն հետազոտողը, ով ինքն իրեն չեզոքացնում է իր հետազոտած իրականությունից: Հետազոտական այս ավանդույթի շարունակողները քննադատ ռեալիստներ են: Նրանք գտնում են, որ կարևոր է օբյեկտիվ իրականությունը ճշգրիտ մեթոդներով հնարավորինս բացահայտելը:

Այսինքն, իրականացնել քանակական հետազոտություն, նշանակում է մտածել սոցիալական իրականության չափելիության, այդ իրականության ներկայացուցչականության, հասարակության մասին ընդհանրացումների (օբյեկտիվ կանոնների) մասին:

Քանակական հետազոտությունների ուժեղ կողմն այն է, որ որքան հետազոտողներ էլ այն իրականացնեն, նրանք բոլորը կգան միևնույն/համանման եզրահանգումների, քանի որ սոցիալական իրականության բացահայտման մեթոդներն ու մեթոդաբանությունները ճշգրիտ են (այդ մասին կարդա՝ 2.7 - 2.11 բաժիններում):

Աղյուսակ 1: Քանակական հետազոտությունների օրինակներ

Հետազոտության/զեկույցի անվանումը	Հղում
Caucasus Barometer	http://www.crrc.am/hosting/file/_static_content/barometer/2015/CRRC-Armenia_CB2015_Presentation_ENG.pdf
STEP/Skills Measurement Research Study	http://documents.worldbank.org/curated/en/345441468218375478/pdf/955640WP00PUBL0menia0CR0Final020140.pdf
Quantitative Research Report. Audience Research Project	http://nfvf.co.za/home/22/files/Reports/FINAL_NFVF%20ARP-QuantReport_10042015cc.pdf
The Healthy Foundations Lifestages Segmentation	http://www.thensmc.com/dev/sites/default/files/291517-283947%20-%20HF%20QUANT%20FINAL%20REPORT%2029th%20June%20%202010.pdf
Food Behaviour Consumer Research: Quantitative Phase	http://www.wrap.org.uk/sites/files/wrap/Food%20behaviour%20consumer%20research%20quantitative%20jun%202007.pdf

1.3. Որակական տրամաբանություն

Հետազոտողների մյուս թեր՝ որակական հետազոտողները, գտնում են, որ գիտելիքն օբյեկտիվ չէ, այլ ձևավորվում է ակտիվ անձնական/սուբյեկտիվ փորձի արդյունքում: Նրանք ընդհանրապես չեն հավակնում բացահայտել օբյեկտիվ իրականությունը ու երբեմն չեն էլ հավատում օբյեկտիվ իրականության վերջնական բացահայտման հնարավորությանը: Օբյեկտիվ իրականությունը սահմանում են որպես սահմանափակ՝ անհատական կենսափորձերի համադրման արդյունքում առաջացող սոցիալական տարածություն, կառուցվածք, ենթամշակույթ, ճշմարտության ռեժիմ: Նրանցից ոմանք նույնիսկ հարցականի տակ են դնում օբյեկտիվ իրականության գոյությունը: Նրանք գտնում են, որ սոցիալական իրականությունը բազմաթիվ իրականությունների ամբողջություն է ու այստեղ կարևոր է ամեն առանձին անհատի, նաև հետազոտողների կենսափորձը:

Որակական հետազոտության ուժեղ կողմը, ի հակադրություն քանակական հետազոտության, այն է, որ որքան հետազոտող ուսումնասիրի միևնույն խնդիրը, այնքան ավելի բազմազան ու խորը տեղեկատվություն կստացվի: Այսինքն, որակական հետազոտությունը պահանջում է հետազոտական ոճ, մեծապես ազդվում է այն իրականացնող հետազոտողի աշխարհայացքից ու հետազոտական նախընտրություններից:

Եթե քանակական հետազոտությունների պարագայում խոսում ենք հետազոտության հավաստիության, ապա որակական հետազոտությունների պարագայում խոսում ենք հետազոտության ներդաշնակության ու ինելամիտ, համոզիչ լինելու մասին:

Աղյուսակ 2: Որակական հետազոտությունների օրինակներ

Հետազոտության/զեկույցի անվանումը	Հղում
“Missing Women” in the South Caucasus: Local perceptions and proposed solutions	https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/22506/94705.pdf?sequence=5&isAllowed=y
Rights of Children from Religious and Ethnic Minority Groups in Armenia	http://www.epfarmenia.am/wp-content/uploads/2014/06/2014_Field_Study

	_Rights_of_Children_en.pdf
A qualitative study of children, young people and 'sexting'	https://www.nspcc.org.uk/globalassets/documents/research-reports/qualitative-study-children-young-people-sexting-report.pdf
Children's Well-being in UK, Sweden and Spain: The Role of Inequality and Materialism A Qualitative Study	https://old.unicef.es/sites/www.unicef.es/files/IPSOS_UNICEF_ChildWellBeingreport.pdf
Most vulnerable children: world vision UK programme inclusion and impact	http://www.iicrd.org/sites/default/files/projects/files/WVUKMVC_Final_Report_FULL_June2014.pdf

1.4. Որակական և քանակական տրամաբանությունների համադրում

Կան հետազոտողներ, ովքեր փորձում են համադրել որակական և քանակական հետազոտությունների մեթոդները, մեթոդաբանությունները, գործիքակազմը և այլն: Նրանք իրենց իրականացրած հետազոտության այս տեսակը կոչում են «**Խառը մեթոդներով**» հետազոտություններ:

Խառը մեթոդներով հետազոտությունները փորձում են միավորել որակական և քանակական հետազոտությունները՝ «ամուսնացնել» միայն որակական ու միայն քանակական մոտեցումներ ունեցող հետազոտական բանակները:

Խառը մեթոդներով հետազոտությունները լայնածավալ կիրառում են ստացել 90-ականներից հետո և դրանց կիրառման միտումը շարունակում է աճել, քանի որ ավելի ու ավելի հետազոտողներ են սկսում հավատալ, որ քանակական ու որակական տրամաբանությունների համադրումը հանգեցնում է սոցիալական իրականության առավել համակողմանի բացահայտմանը: Այդուհանդերձ, այս տիպի հետազոտությունները ժամանակատար ու ռեսուրսատար են և ենթադրում են համադրման մեթոդաբանական/մեթոդական այլընտրանքային լուծումների որոնում:

Ենթադրվում է, որ որևէ հետազոտող պետք է առավել փորձառու լինի՝ շատ լավ տիրապետի հետազոտության իրականացման և՛ քանակական, և՛ որակական տրամաբանությանը, որ իրականացնի խառը մեթոդներով հետազոտություն/ներ:

Խառը մեթոդներով հետազոտությունները սկիզբ են առնում պրագմատիկ մոտեցումից այն մասին, որ կարևոր է հիմնախնդիրը, որը մենք ուսումնասիրում ենք ու հիմնախնդիրն է «ասում» մենք այն որակական, թե՞ քանակական մեթոդներով ուսումնասիրենք: Իսկ դուք պրագմատիկ եք: Եթե այո, ապա դուք ն՛ որակական, ն՛ քանակական հետազոտություններից կվերցնեք այն, ինչը ձեզ անհրաժեշտ է, բայց դա պահանջում է սոցիալական իրականության հանդեպ համապատասխան մոտեցում ու ընդունում, որ ն՛ որակական, ն՛ քանակական հետազոտություններն ունեն իրենց առավելություններն ու թերությունները: Սա նաև պահանջում է հետազոտության վրա առավել շատ ժամանակի ու ռեսուրսների ծախսման պատրաստակամություն:

Աղյուսակ 3: Խառը մեթոդներով հետազոտությունների օրինակներ

Հետազոտության/զեկույցի անվանումը	Հղում
Performance Evaluation of the Territorial and Administrative Reform of Armenia	http://www.crrc.am/search/?module=article&utility=show_article&id_article=554
Promoting Transparency and Accountability through Advanced Civil Society Participation	http://www.crrc.am/research-and-surveys/ongoing-projects/483-TIAC?lang=en
Situation Analysis of Youth in Lebanon Affected by the Syrian Crisis	http://www.unfpa.org.lb/Documents/Situation-Analysis-of-the-Youth-in-Lebanon-Affecte.aspx
Health and Safety Attitudes and Behaviours in the New Zealand Workforce: A Study of Workers and Employers	https://www.worksafe.govt.nz/worksafe/research/research-reports/reports/attitudes-and-behaviours-survey-qualitative-construction-report.pdf
Benefits of Lifelong Learning (BeLL) – զեկույցում զետեղված են որակական տվյալներ, որոնք հավաքագրվել են քանակական հարցումից հետո	http://www.bell-project.eu/cms/wp-content/uploads/2014/06/BeLL-Qualitative-Data-Analysis-Report.pdf
Social Networking A quantitative and qualitative research report into attitudes, behaviours and use	http://news.bbc.co.uk/2/shared/bsp/hi/pdfs/02_04_08_ofcom.pdf



Իսկ դուք քանակակա՞ն, որակակա՞ն, թե՞ խառը մեթոդներով հետազոտություն եք պատրաստվում կիրառել: Այս հարցի պատասխանից է կախված այն, թե դուք սոցիալական իրականության հետազոտման ո՞ր տրամաբանությանն եք մոտ, ո՞ր հետազոտական մոտեցումն է ձեզ, ձեր կազմակերպության ու ձեր կողմից իրականացրած աշխատանքի տեսանկյունից առավել կարևոր:

1.5. Ո՞վ է հետազոտողը և հետազոտական էթիկա

Ըստ Քեմբրիջի առցանց բառարանի (Cambridge University Press, 2017), հետազոտողը մեկն է, ով զգուշորեն ուսումնասիրում է մի որևէ երևույթ՝ հասկապես այդ երևույթի մասին նոր տեղեկատվություն բացահայտելու/ստանալու կամ այդ երևույթն ավելի լավ հասկանալու նպատակով:

«Հետազոտողը», ըստ էության, մասնագիտություն է: Այդուհանդերձ, հաշվի առնելով արդի աշխարհում հետազոտական հմտությունների ու հետազոտություններից ստացված տեղեկատվության կարևորությունը, շատերն են հետազոտություն իրականացնում՝ չլինելով մասնագետ: Մի կողմ թողնելով հետազոտության որակի խնդիրը՝ կարևոր է հասկանալ, որ հետազոտողի դերում կարող են հայտնվել բոլորը: Յուրաքանչյուր ոք, ով իր առջև դնում է աշխարհը մեթոդապես ճանաչելու հիմնախնդիրը, արդեն իսկ ստանձնում է հետազոտողի դերը:

Անշուշտ, մասնագետ-հետազոտողների ու հետազոտական կազմակերպությունների իրականացրած աշխատանքը հիմնարար նշանակություն ունի ինչպես գիտության, այնպես էլ քաղաքականությունների իրականացման և իրականության հասկացման ու այն վերափոխելու համար, սակայն արդի աշխարհի քաղաքացուց ավելի ու ավելի են պահանջվում հետազոտական հմտություններ: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ավելի ու ավելի են հմտանում սոցիալական հետազոտությունների իրականացման մեջ՝ ներգրավելով հետազոտողների, ձեռք բերելով հետազոտական հմտություններ, զարգացնելով հետազոտական ու վերլուծական կարողություններ:

Հետազոտողի դերը ստանձնելու պարագայում, սակայն, էական է հետևել հետազոտական տրամաբանության կանոններին ու հետազոտական էթիկային:

Մասնավորապես, էթիկապես ընդունելի են այն հետազոտությունները, որոնց շրջանակներում ներգրավված հետազոտվող հանրությանը նախապես ամբողջական տեղեկատվություն է տրամադրվում իրականացվելիք հետազոտության մասին ու հետազոտողը/հետազոտական կազմակերպությունը ստանում է հետազոտությանը

մասնակցողների գրավոր համաձայնությունը: Սա հիմնականում իրականացվում է տեղեկատվական թերթիկների ու մասնակցության համաձայնության թերթիկների միջոցով: Տես ստորև ներկայացված ձևաթուղթը (կարմիր գույնով ընդգծված են հիմնական կետեր)՝ կիրառված ՀՌԿԿ-Հայաստանի կողմից «Ժողովրդավարական մշակույթը գործողության մեջ» ծրագրում ֆոկլուս խմբային ուսումնասիրության շրջանակներում: Նման ձևաթղթերում պարտադիր է նշել հետազոտության նպատակը, ստանալ հետազոտությանը մասնակցող անհատի թույլտվությունը ձայնագրման համար, հայտնել նրան, որ նա իրավունք ունի չպատասխանելու որևէ հարցի և այլն:

Կան հետազոտություններ, որոնք հանրության ներկայացուցիչների/անհատների հետ աշխատանք չեն ենթադրում, սակայն այս դեպքում էլ կարևոր է օգտագործվող նյութերի հեղինակային իրավունքի պաշտպանությունը, հենց հետազոտողի էթիկական վարքը և այլն:

Յուրաքանչյուր երկրում (բուհերում, հետազոտության մեջ մասնագիտացած կազմակերպություններում) հետազոտական էթիկայի ուղենիշներին ու դրանց կիրառությանը տիրապետող հանձնախմբերկամ անհատներ կան, ումից կարելի է խորհուրդ հարցնել հետազոտական էթիկայի շուրջ: Ավելին՝ հասարակագետների շրջանում լայն կիրառություն ունեն Ամերիկյան սոցիոլոգիական ասոցիացիայի ուղենիշները (American Sociological Association, 2008).

Աղյուսակ 4: Հետազոտական էթիկայի՝ միջազգայնորեն կիրառվող, ուղենիշներ

Հետազոտության ոլորտը/մեթոդաբանությունը	Հղումը
Մարդաբանություն	Association of Social Anthropologists of the UK and Commonwealth
Կրիմինալոգիա	British Society of Criminology: Code of Ethics for Researchers in the Field of Criminology
Կրթություն	British Educational Research Association Ethical Guidelines for Educational Research
Աշխարհագրություն	Association of American Geographers Statement on Professional Ethics <hr/> Royal Geographical Society: Research Ethics and Code of Practice

Պատմություն	Oral History Society of the UK Ethical Guidelines
Իրավունք	Socio-Legal Studies Association: Statement of Principles of Ethical Research
Կառավարում	Academy of Management's Professional Code of Ethics
Քաղաքագիտություն	American Political Science Association (APSA) Guide to Professional Ethics in Political Science (Section H)
Քաղաքականություն	Political Studies Association, Guidelines for Good Professional Conduct
Հոգեբանություն	British Psychological Society Code of Ethics and Conduct <ul style="list-style-type: none"> • British Psychological Society: Conducting Research on the Internet: (Guidelines for internet-mediated research)
Սոցիալական հետազոտություն	Social Research Association: Ethical Guidelines <ul style="list-style-type: none"> • Social Research Association : Data Protection Act 1998 : Guidelines for Social Research Social Research Association: Code of Practice for the Safety of Social Researchers
Սոցիոլոգիա	The British Sociological Association: Statement of Ethical Practice American Sociological Association: Code of Ethics
Վիզուալ հետազոտություն	ESRC National Centre for Research Methods Review Paper: Visual Ethics: Ethical Issues in Visual Research

Տեղեկատվական և համաձայնության թերթիկ

Շնորհակալություն մասնակցելու համաձայնության համար: Մենք շատ հետաքրքրված ենք Ձեր արժեքավոր կարծիքով այն մասին, թե ինչպես են ժողովրդավարական կարողությունները թվային դարաշրջանում արտահայտվում Ձեր, Ձեր աշակերտների և դպրոցի սոցիալական իրականության մեջ և ինչպես է հնարավոր, որ դպրոցը նպաստի կամ խոչընդոտի այդ կարողությունների զարգացմանը՝ հասցեագրելով մարդու իրավունքների կրթությունը, հատկապես հայաստանյան համատեքստում:

- Այս ուսումնասիրության **նպատակն** է հասկանալ, թե ինչպես են ուսուցիչները ընկալում իրենց աշակերտների՝ թվայնացված աշխարհի կենսափորձը և ինչպես է աշակերտների առցանց և ցանցից դուրս կենսափորձը նպաստում մարդու իրավունքների կրթությանը և ժողովրդավարական կարողությունների ձևավորմանը դպրոցում: Եվ վերջապես, մենք նպատակ ունենք ուսումնասիրելու Ձեր կարծիքն այն մասին, թե ինչպես կարող է թվային տարածությունը կիրառվել մարդու իրավունքների կրթության համար: Մենք հուսով ենք տեղեկանալ, թե ինչպես կարելի է առավել զարգացնել դասավանդման և ուսումնասիրության պայմանները և այլ գործոններ, որ կնպաստեն մարդու իրավունքների կրթությանը:
- Ձեր տրամադրած տեղեկատվությունը **անանուն է** և մենք Ձեր անունը ոչ մի կերպ չենք կապի ֆոկուս խմբում Ձեր բարձրաձայնած կարծիքի հետ:
- Մենք ցանկանում ենք **ձայնագրել** ֆոկուս խմբային քննարկումները՝ վստահանալու, որ սղագրելիս ոչինչ բաց չենք թողել: Ձայնագրությունը չի կապվի ձեր անունների հետ և դրանց հասանելիությունը խստորեն կվերահսկվի:
- **Դուք կարող եք հրաժարվել պատասխանել որևէ հարցի** և, եթե ցանկանաք, կարող եք նաև կասեցնել Ձեր մասնակցությունը:
- Մենք հասկանում ենք, թե որքան կարևոր է, որ Ձեր տրամադրած տեղեկատվությունը գաղտնի և անանուն մնա: Մենք խնդրում ենք, որ քննարկման մասնակիցները հարգեն մեկը մյուսի պատասխանը գաղտնի պահելու սկզբունքը:
- Եթե հարցեր ունենաք հիմա կամ ֆոկուս խմբային քննարկման ավարտից հետո, դուք միշտ կարող եք դիմել հետազոտական թիմի ներկայացուցչին, ում **կոնտակտային տվյալներն** այս տեղեկատվական թերթիկի վրա են:
- Խնդրում ենք նշում անել և **ստորագրել՝ համաձայնելով** մասնակցել այս ֆոկուս խմբային քննարկմանը և ապահովել մեր հետադարձ կապը Ձեր հետ:

Համաձայն եմ մասնակցել

Ստորագրություն _____

Մեր կոնտակտային տվյալները՝

Սոնա Բալասանյան, ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամ, հետազոտության գծով տնօրեն,
էլ. փոստ rd@ccrc.am, հեռախոս +374 57 48 98 (ներքին՝ 102):

1.6. Հետազոտական հիմնախնդիրներ և գրականության վերլուծություն

Հետազոտական հիմնախնդիրը որոշակի և հասկանալի ձևակերպում է պահանջում այն երևույթի մասին, որը մենք ցանկանում ենք հետազոտել՝ երևույթի հետ կապված իրավիճակը փոփոխելու, դժվարությունների հասկացման, տեսականորեն կամ գործնականորեն առկա անպատասխան հարցերին պատասխաններ գտնելու համար (Bryman, 2007, pp. 5-20):

Հետազոտական հիմնախնդրի մասին մտածելիս մենք դեռևս չենք պատասխանում այն հարցին, թե ինչպես ենք իրականացնելու հետազոտությունը, սակայն վերջինիս մասին հստակ պատկերացումը հետազոտական նախագծի ամուր հիմքն է:

Հասարակագիտության մեջ հիմնախնդիրների հայեցակարգման ու տարբերակման հնարավորությունները բազմաթիվ են: Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ լինում են **ճանաչողական/նկարագրական, համեմատություն ենթադրող և երևույթների միջև կապերի բացահայտում ենթադրող** հիմնախնդիրներ (USC, 2017):

Ճանաչողական/նկարագրական հիմնախնդիրները հետազոտության առարկա են դառնում, երբ որևէ երևույթ, իրավիճակ, կարգավիճակ մեծ կարևորություն ունի, սակայն դրա մասին տեսության և պրակտիկայի դաշտում բավարար տեղեկատվության պակաս կա:

Համեմատություն ենթադրող հիմնախնդիրները վերաբերվում են հասարակության մի քանի խմբերի, մի քանի երևույթների, միևնույն սոցիալական խմբի տարբեր կարգավիճակների ըմբռնմանը՝ համեմատության համատեքստում:

Երևույթների միջև կապերի բացահայտում ենթադրող հիմնախնդիրները, հիմնականում, քանակական բնույթի են ու ենթադրում են վիճակագրության միջոցով երևույթների միջև այնպիսի կապերի բացահայտում, որոնք դեռևս բացահայտված չեն տվյալ սոցիալական համատեքստում կամ առկա հետազոտությունների շրջանակներում:

Հետազոտության հիմնախնդրի գրավոր ներկայացումը ենթադրում է, որ գրավոր տեքստը պետք է այնպես գրված լինի, որ առաջացնի ընթերցողի հետաքրքրությունը (հետազոտության նկատմամբ), ներկայացնի գրականության ինքնատիպ վերլուծություն, ցույց տա, թե այդ հիմնախնդրի հատկապես ո՞ր առանձնահատկություններին է ուղղվելու հետազոտությունը:

Գրականության վերլուծությունն արդեն իսկ հետազոտական հիմնարար աշխատանք է: Հայտնի է, որ կան հետազոտություններ, որոնք հիմնվում են հենց միայն գրականության ու փաստաթղթերի (տեղեկատվության կրիչների¹) ուսումնասիրության

¹ «Փաստաթուղթ» ասելով հասարակագիտության մեջ հասկանում ենք հետազոտության տեսանկյունից կարևոր տեղեկատվություն կրող յուրաքանչյուր նյութ՝ կայքէջ, համակարգչային փաստաթղթեր, արխիվային նյութեր, աուդիո/վիդեո նյութեր և այլն: Տե՛ս 2.4. բաժինը:

վրա: Հիմնախնդրի հիմնավորումը նույնպես հետազոտական և վերլուծական աշխատանք է, քանի որ պետք է հասկանալ հիմնախնդրի հետազոտված լինելու աստիճանը, ինչ տեսական մոտեցումներ կան հիմնախնդրի/դրան առնչվող թեմաների վերլուծություններում: Հիմնախնդրի հետ կապված ինչ նախագծեր են իրականացվել, ինչ զեկույցներ են հրապարակվել:

Գրականության վերլուծության որակի էական գրավականը հղումներ իրականացնելու կարգն է, քանի որ հիմնախնդրի հիմնավորումն ընթերցողի համար պետք է հստակ լինի, թե ինչ տվյալադարաններից, տվյալներից ու զեկույցներից, գրքերից, հոդվածներից ու գրականությունից ենք օգտվել՝ այն ուսումնասիրելու ու հիմնավորելու համար: Աղբյուրներ գտնելն ու հղումներ կատարելը էական գործընթաց է, որի իրականացման հմտությունները պետք է մշակել ու ձեռք բերել: Կարևոր է օգտվել միջազգայնորեն ընդունելի՝ գրականության վերլուծության և հղման կարգերից:



Ո՞րն է հղումներ կատարելու և գրականություն փնտրելու ձեր տարբերակը: Օգտվո՞ւմ եք որևէ հղման կարգից: Ի՞նչպես եք փնտրում անհրաժեշտ նյութեր. ի՞նչ տվյալադարաններից եք օգտվում, առցանց որոնման ի՞նչ ռազմավարություն ունեք: Հղումներ կատարելու և ձեր գրադարանը ստեղծելու համար օգտվո՞ւմ եք արդյոք առցանց ծրագրային փաթեթներից, օրինակ «Ջոտերոյից» կամ «Մենդլիից» ([Zotero](#), n.d.; [Mendeley](#) Ltd, 2017):

Եթե փորձենք քայլ առ քայլ նկարագրել գրականության վերլուծության գործընթացը, ապա կստացվի հետևյալ հաջորդականությունը (Galvan, 2006):

Քայլ 1: որոշակիացնել հղումներ կատարելու կարգը

Քայլ 2: որոշակիացնել վերլուծության թեման

Քայլ 3: որոշակիացնել գրականությունը, որն ընթերցվելու է և ենթարկվելու վերլուծության

Քայլ 4: Վերլուծել գրականությունը

Քայլ 5: Ընդհանրացնել վերլուծությունը, քարտեզագրել հիմնական հասկացությունները

Քայլ 6: Մինթեզել ընթերցված նյութը

Քայլ 7: Գրել հետազոտության գրականության վերլուծությունը

Մեր մոտեցումն աշխատանքի նկատմամբ, որը ներկայացնում ենք, կարելի է արտահայտել համապատասխան բայերի օգնությամբ (Academic Coaching and Writing LLC, 2017)՝

- դրական գնահատում (սատարել, կողմնակից լինել, պնդել, տեսնել, ըմբռնել, հիմնավորել),
- չեզոք գնահատում (հասցեագրել, հղում անել, մեկնաբանել, դիտարկել),
- դեռևս հաստատման ենթակա գնահատում (ենթադրել, առաջարկել, քննարկել),
- քննադատական գնահատում (Ժխտել, քննադատել, հերքել, հաստատել, իմաստավորել):

Մինչ կգրեք Ձեր հետազոտության հիմնախնդրի հիմնավորումը և կիրականացնեք գրականության վերլուծություն, կարդացեք հաջողված վերլուծության/հիմնախնդրի հիմնավորման օրինակներ, դիտարկեք վերևում ներկայացված գեկույցների օրինակներում առկա գրականության վերլուծության օրինակները:

1.7. Վարկածների ձևակերպման առանձնահատկությունները

Վարկածը ենթադրություն կամ ենթադրելի բացատրություն է, որը հիմնվում է սահմանափակ թվով փաստերի ու տվյալների վրա: Այն կարելի է հաստատել կամ հերքել ուսումնասիրություն կամ հետազոտություն իրականացնելով (Oxford University Press, 2017):

Գրականության վերլուծության հիման վրա մենք պատասխանում ենք հետևյալ հարցերին, որոնք ուղղակիորեն հանգեցնում են վարկած(ներ)ի ձևակերպմանը (Armed with Science, 2010):

- Ինչո՞ւ է հետազոտությունը կարևոր, մեզ հետաքրքրող երևույթի վերաբերյալ ի՞նչ ենք մենք ցանկանում հասկանալ:
- Ի՞նչ են մեր ոլորտի/հիմնախնդրի ուսումնասիրման ոլորտի հետազոտողներն արդեն արել պատասխանելու համար մեզ հետաքրքրող հարցերին:
- Որո՞նք են մեզ հետաքրքրող երևույթի/հիմնախնդրի այն ասպեկտները, որոնք բավարար կերպով դեռևս չեն հետազոտվել:
- Ինչպե՞ս կարող է իմ ուսումնասիրությունը լրացնել երևույթի/հիմնախնդրի մասին արդեն հայտնի տեղեկատվությունը:

Հետազոտական վարկածները պետք է.

- արտահայտեն հետազոտության հարց(եր)ը և նպատակը (տես աղյուսակ 5)
- լինեն չափելի՝ հետազոտությունը պետք է ի վերջո հաստատի կամ հերքի (հնարավոր է՝ մասնակիորեն) առաջադրված վարկած(ներ)ը
- ձևավորվեն հետազոտող(ներ)ի անմիջական փորձի վրա
- լինեն համառոտ, բայց հստակ ձևակերպված (սովորաբար մեկ հետազոտությունը ենթադրում է մեկից երեք վարկածի առաջադրում)

- հիմնված լինեն մտածված պատճառահետևանքային կապերի վրա՝ պատասխանելով հետևյալ հարցերին.
 - ✓ ինչո՞ւ ենք մենք իրականացնում հենց այդ կանխատեսումը
 - ✓ ինչո՞ւ են հատկապես այդ վարկածները կարևոր
 - ✓ արդյո՞ք վերջինիս հաստատումը կամ հերքումը իրենից կարևոր ճանաչողական արժեք է ներկայացնում
 - ✓ ինչո՞ւ են ձևակերպված հենց այս վարկածները և ոչ ուրիշները:

Որակական, քանակական և խառը տիպի հետազոտություններն արտահայտում են հետազոտության որևէ տիպի տրամաբանությունը և դրանց ձևակերպումները խիստ տարբերվում են: Օրինակ, եթե քանակական վարկածների դեպքում չափելիության չափանիշն առավել վառ է արտահայտված, ապա որակական հետազոտության պարագայում վարկածի հաստատումն իրականացվում է համոզիչ ու ներդաշնակ վերլուծությամբ: Խառը տիպի հետազոտությունների վարկածները, նույնպես, համապատասխանում են այս տիպի հետազոտությունների նպատակներին ու ենթադրում են որակական և քանակական տվյալների հավաքագրման անհրաժեշտություն:

Ստորև ներկայացված են վարկածների օրինակներ.


Որակական: Երիտասարդ աղջիկների ժամանցի կենսափորձը ենթարկվում է սոցիալական վերահսկողության՝ ըստ «երիտասարդ աղջկա» կերպարին վերագրվող ավանդական ընտանեկան պատկերացումների:

Քանակական: Երիտասարդների քաղաքացիական ակտիվությունը պայմանավորված է նրանց՝ ՔՀԿ ֆորմալ մասնակցությամբ:

Նշում: Այստեղ հստակ են «քաղաքացիական ակտիվություն» և «ՔՀԿ ֆորմալ մասնակցություն» փոփոխականները, որոնք սահմանվում ու չափվում են հետազոտության ընթացքում:

Խառը: Երիտասարդների քաղաքացիական ակտիվությունը պայմանավորված է նրանց՝ ՔՀԿ ֆորմալ մասնակցությամբ, քանի որ նրանց ֆորմալ մասնակցությունը որևէ ՔՀԿ գործողություններին հանգեցնում է հաջողության պատմությունների:

Աղյուսակ 5: Վարկածների փոխկապվածությունը հետազոտական հարցի և նպատակի հետ



1.8. Հետազոտական նախագիծ

Յուրաքանչյուր հետազոտական նախագիծ բաղկացած է հետևյալ հիմնական մասնաբաժիններից.

- ✓ Հետազոտական հիմնախնդրի հիմնավորում/արդիականություն (գրականության վերլուծությամբ)
- ✓ Հետազոտության նպատակ
- ✓ Հետազոտության խնդիրներ
- ✓ Վարկած(ներ)
- ✓ Մեթոդաբանություն (մեթոդի տեսությունը), մեթոդներ
- ✓ Ընտրանք՝ մեթոդաբանությունը, հաշվարկը, դեպքերի ընտրությունը որակական հետազոտության պարագայում
- ✓ Տվյալների վերլուծության մեթոդաբանությունը (կարող է տեղադրվել մեթոդաբանության բաժնում և կարող է ներկայացվել առանձին)

- ✓ Հետազոտության նախագծի հայտնի թերությունները
- ✓ Գրականության ցանկը
- ✓ Հետազոտության ժամանակացույցը, բյուջեն և գործիքները՝ հարցաթերթ, դիտարկման քարտ և այլն, կարելի է ներկայացնել որպես հավելված

Եթե հետազոտական հայտ ենք լրացնում, սովորաբար, կախված հայտին ներկայացվող առանձնահատուկ պահանջներից, փոփոխվում է նաև հետազոտական նախագծի բովանդակությունը, սակայան վերը ներկայացված մասնաբաժիններն այս կամ այն կերպով ներկայացվում են յուրաքանչյուր հետազոտության նախագծման ընթացքում:

Եթե հետազոտական հայտ չենք լրացնում, ապա հետազոտության նախագծի կառուցվածքը կարող ենք ինքներս որոշել, սակայն, ամեն դեպքում, նախագծի փաստաթուղթը պետք է ստեղծել և հասցնել ավարտուն տեսքի մինչև որ կսկսենք հետազոտությունը:

Մինչև մեր հետազոտության նախագծումը սկսելը, էական է տեսնել, թե այլ հետազոտողներ/հետազոտողների թիմեր ինչպես են նախագծել նմանատիպ հետազոտություններ՝ ինչ ժամանակային սահմաններում, ինչ բյուջեի շրջանակներում, ինչ մասնագետներ են ներգրավված եղել:

Բազմաթիվ են հետազոտության նախագծմանը վերաբերող մեթոդաբանական դասագրքերը (տե՛ս, օրինակ, Cresweel, 2014; Geoffrey, DeMatteo, Festinger, 2010) Հետազոտության նախագծումը նույնպես կախված է հետազոտության որակական, քանակական կամ խառը մեթոդներով լինելուց:

Կարևոր է տարանջատել անհատական և թիմային հետազոտական նախագծերը: Սովորաբար, անհատական հետազոտական նախագծերն ավելի փոքրածավալ են ու ենթադրում են ավելի քիչ ռեսուրսների կիրառություն: Այդուհանդերձ, հետազոտության որակն ու արժեքը չեն չափվում դրա վրա ներդրված ֆինանսական ռեսուրսների չափով. այստեղ հիմնարար են մարդկային հետազոտական ռեսուրսները ու մեթոդաբանական հնարամտությունը:

2. Հետազոտության մեթոդներ. որակական



Որակական
հետազոտություն

Ինչպե՞ս հարցնել և
վերլուծել

Ինչպե՞ս ընտրել

2.1. Խորքային հարցազրույց

Խորքային հարցազրույցը որակական հետազոտությունների շրջանակներում բավականին հաճախ կիրառվող մեթոդներից մեկն է: Այն իրենից ներկայացնում է թեմատիկ զրույց, որը, ըստ ընդունված ու տարածված պրակտիկայի, տևում է մոտ մեկ ժամ: Հնարավոր է՝ նույն հարցվողի հետ խոսել մի քանի անգամ մեկ ժամվա սահմաններում, սակայն մեկ հանդիպման տևողությունը չարժե մեկ ժամից ավելի երկարաձգել:

Խորքային հարցազրույցի կառուցվածքայնացման աստիճանը կարևոր է: Մենք կարող ենք շատ ազատ որևէ թեմայի շրջանակներում զրուցել մարդու հետ և սպասել, որ զրույցն ուղղորդի մեզ հաջորդ հարցերին, սակայն կարող ենք նախապես որոշակիացնել թեմաների ու թեմատիկ հարցադրումների շրջանակն այնպես, որ մենք հնարավորինս վերահսկենք զրույցի թեմատիկ ուղղվածությունը: Շատ ազատ զրույց նույն թեմայով մի քանի մարդու հետ վարելու պարագայում, սակայն, դժվարություններ կստեղծվեն նյութի ծավալի տեսանկյունից: Ուստի, կարևոր է կանխավ որոշել, թե ինչ ծավալի նյութ ենք մենք ցանկանում ստանալ խորքային հարցազրույցներից:

Նախկինում արված հետազոտությունները, որոնց շրջանակներում իրականացվել են խորքային հարցազրույցներ, ցույց են տվել, որ առնվազն հինգ, երբեմն էլ՝ յոթ, հարցազրույց է հարկավոր իրականացնել, որպեսզի վերլուծության համար ձևավորվեն ենթաթեմաներ:

Խորքային հարցազրույցի իրականացման համար խիստ էական է, որ հարցազրույցի միջավայրը անկաշկանդ ու տրամադրող լինի, շուրջբոլորը չլինեն մարդիկ, ովքեր կարող են ազդել հարցվողի պատասխանների վրա:

Խորքային հարցազրույցները սովորաբար ձայնագրվում են ու սղագրվում: Սղագրությունը հարգազրույցի բառ առ բառ տեքստավորումն է: Հետագայում, ընթերցվում է հարգազրույցի տեքստը, կոդավորվում է կամ իրականացվում է իմաստային/թեմատիկ վերլուծություն և այլն:

Եթե հետազոտողը կամ հետազոտական թիմը սկսնակ է, խորքային հարցազրույցների իրականացման հարցում, ապա լավ կլինի տեսնել խորքային հարցազրույցների համար այլ հետազոտողների կողմից ստեղծած հարցազրույցի ուղեցույցներ (տե՛ս, ստորև ներկայացված օրինակը, ինչպես նաև University of Southern Maine, n.d.):

Խորին հարցազրույցի վերլուծության փուլում կարելի է վերադառնալ հարցվողներին հետադարձ կապի համար: Վերլուծության հիմնական, ընդհանուր ու լայնորեն կիրառելի մեթոդը թեմատիկ վերլուծությունն է: Վերլուծության շրջանակներում կարելի է շեշտադրել հարցվողի ուղղակի խոսքը՝ մեջբերումներ անել (տրամադրել

համապատասխան հղումը անձնական հոդորդակցությանը ռեսպոնդենտի հետ), բայց չափի մեջ, միայն խիստ անհրաժեշտ դեպքերում և այնպես, որ մեջբերումն իսկապես նպաստի իրականացված վերլուծությանը:

Խորքային հարցազրույցի ուղեցույց (օրինակ)

Ներածություն

Շնորհակալ եմ ինձ հետ այսօր հանդիպելու համար: Ինչպես արդեն գիտեք (արդեն կարդացիք տեղեկատվական թերթիկը և տվեցիք մասնակցության գրավոր համաձայնությունը, շնորհակալություն), այս հետազոտությունը նպատակ ունի ուսումնասիրելու մասնագիտական ինքնությունը բարձրագույն կրթության կառավարման ամբիոններում: Հետազոտության շրջանակներում փորձ է արվում որոշակիացնելու անցյալում եղած և ներկայումս առկա կրթական իրականությունը, որը փոփոխում ու սահմանում է կրթության ոլորտում աշխատող մասնագետների ինքնությունները և ինչպես է սա ազդում դասավանդման վրա: Ձեր մասնակցությունը հետազոտությանը կնպաստի ամբիոնային քաղաքականությունների առաավել արդյունավետ մշակմանը և կհարստացի գիտելիքները այն մասին, թե ինչ դժվարությունների պայմաններում է փոփոխվում կրթության մասնագիտացումը Հայաստանում: Հարցազրույցը կտևի մոտավորապես մեկ ժամ:

[Կրթության սահմանումը, ինքնանույնականացումը համալսարանի հետ, ամբիոնի կազմակերպումը]

- **[Մեծ]** Եկեք սկսենք <<կրթություն>> հասկացությամբ, խնդրում եմ սահմանեք կրթությունը՝ ինչպես որ դուք եք այն տեսնում, ինչ է կրթությունը Ձեր համար: Դուք Ձեզ համարում եք կրթության, թե՞ կառավարման ոլորտի մասնագետ: Ինչպես կրթագրեք բարձրագույն կրթության կառավարումը որպես մասնագիտություն:
- **[Ինքնանույնականացում]** Կարո՞ղ եք խնդրում եմ բնութագրել, թե ինչ է նշանակում լինել այս համալսարանի և այս ամբիոնի անդամ/մասնագետ:
- **[Կազմակերպություն]** Կարո՞ղ եք խնդրում եմ նկարագրել այս ամբիոնի հիմնական դերը: Խնդրում են անդրադարձեք ուսումնական ծրագրին, քաղաքականություններին, ընթացակարգերին և այլն:

[Պատմությունը]

- Խնդրում եմ ներկայացրեք կարճ պատմությունը այն մասին, թե ինչպես է այս ամբիոնը հիմնադրվել: Ըստ Ձեզ, ո՞րն էր այս ամբիոնը հիմնադրելու հիմնական պատճառը:
- Ինչպե՞ս եք Դուք տեսնում կրթության ամբիոնների էվոլյուցիան Հայաստանում պատմական կոնտեքստում: Ըստ Ձեզ, որն էր կրթության կառավարման ամբիոնը մանկավարժական ամբիոններից/համալսարաններից տարանջատելու նպատակը:

- Խնդրում եմ կիսեք Ձեր տեսակետը Սովետական կրթության մասին, ինչպե՞ս էք Դուք այն տեսնում: Խնդրում եմ անդրադարձեք առանձին դասավանդողներին, ինստիտուցիոնալացված կրթությանը և կրթության հայեցակարգմանը: Կարծո՞ւմ եք, որ Սովետական անցյալը դեռևս ազդում է Հայաստանում կրթության կազմակերպման վրա՝ անդրադաձեք Ձեր ամբիոնին և խնդրում եմ՝ բերեք օրինակներ:.
- Խնդրում եմ համառոտ պատմեք՝ ամենակարևոր կետերը, թե ինչպես դարձաք այս ամբիոնի ներկայացուցիչ: Ինչպիսի՞ զբաղվածություն ունեիք մինչ այս ամբիոնին միանալը:

[Հետազոտություն]

- Խնդրում եմ պատմեք Ձեր ամբիոնում իրականացվող հետազոտության մասին, ինչպե՞ս է այն կազմակերպվում: Խնդրում եմ՝ անդրադաձեք հետազոտությանը, որն իրականացվում է ուսանողների, ակադեմիական աշխատակազմի և մասնավորապես Ձեր կողմից:
- Խնդրում եմ նկարագրեք, թե ինչպես էք տեսնում կապը ակադեմիական աշխատակազմի ներկայացուցիչների, հետազոտողների և ամբիոնային քաղաքականությունների, ընթացակարգերի, ինչպես նաև առավել լայն համալսարանական շրջանակի միջև:
- Խնդրում եմ՝ կիսվեք Ձեր ապագա մասնագիտական պլանների մասին: Օրինակ, ինչ էք պատրաստվում հետազոտել մոտ ապագայում:

[Դասավանդում և ուսուցում]

- Ինչպիսի՞ մասնագետներ կուզենաք, որ այս ամբիոնի ուսանողները դառնան: Արդյոք ամբիոնը նպաստում է դրան, ինչպե՞ս: Ինչպե՞ս էք Դուք նպաստում դրան:
- Ինչպե՞ս էք տեսնում դասավանդումը և ուսուցումը ամբիոնում, որո՞նք են վերջինիս հիմնական կետերը:

[Եվրոպականացում]

- Ինչպե՞ս կնկարագրեք բարձրագույն կրթության ընդհանուր տարածքը և դրա գրավչությունը:
- Խնդրում եմ կիսեք Ձեր կարծիքը բարձրագույն կրթության Եվրոպականացման մասին Հայաստանի հետ կապված, ինչպե՞ս էք գնահատում երևույթը: Խնդրում եմ՝ անդրադարձեք առանձին կրթողների, ինստիտուցիոնալացված կրթությանը և կրթության հայեցակարգմանը:

[Փոփոխություն և բարեփոխում]

- Ինչպե՞ս էք գնահատում համաշխարհայնացման ազդեցությունը Հայաստանում բարձրագույն կրթության վրա:
- Կարող եք խնդրում եմ անդրադառնալ Հայաստանում բարձրագույն կրթության որակի ապահովմանը: Ի՞նչ հիմնական առանձնահատկությունների ունի այս գործընթացը այս համալսարանի և ամբիոնի հետ կապված: Արդյո՞ք այն հանգեցնում է բարեփոխման, ինչպիսի՞ բարեփոխման:

[Հավելյալ տեղեկատվություն և առաջարկություններ]

- Եվ վերջապես, արդյոք առաջարկություններ ունեք Հայաստանում բարձրագույն կրթության բարեփոխման հետ կապված: Ինչպե՞ս էք գնահատում այս ամբիոնի դերը այս առաջարկությունների համատեքստում:
- Կա՞ որևէ բան, որ կցանկանայիք ավելացնել:

Շնորհակալություն Ձեր տրամադրած ժամանակի համար

2.2. Փորձագիտական հարցում

Փորձագիտական հարցումը, իրականացման ընթացակարգով, մոտ է խորքային հարցմանը (Flick, 2014, p. 228), այդուհանդերձ այն առանձնահատուկ մեթոդ է այն առումով, որ անհրաժեշտ է հստակեցնել, թե ով է «փորձագետը», ինչու է անհրաժեշտ «փորձագիտական գիտելիքը», ինչպես վարել հարցազրույցը, որ ստացվի մեզ անհրաժեշտ տեղեկատվությունը:

«Փորձագետին» սահմանելու մոտեցումները տարբեր են (Littig, 2013).

- կան հետազոտողներ, ովքեր գտնում են, որ բոլոր անհատները կարող են այս կամ այն կերպ փորձագետ լինել՝ իրենց կենսափորձով ներգրավված լինելով հետազոտվող երևույթի տեսանկյունից կարևոր իրականության մեջ: Այս դեպքում որակական հարցման այլ մեթոդներ ևս կարող են օգտակար լինել, օրինակ՝ բանավոր պատմություններ, կենսագրական հարցազրույց և այլն:

- Հետազոտողներն իրենք են սահմանում, թե ով է փորձագետը՝ ելնելով սոցիալական համապատկերում անհատների զբաղեցրած դերից, կարգավիճակից, նրանց գիտելիքներից:

- Կան հետազոտողներ, ովքեր ընդունում են, որ փորձագետ են այն մարդիկ, ովքեր տիրապետում են մասնագիտական/ոլորտային/գիտական գիտելիքների կամ տիրապետում են տեխնիկական գիտելիքների (օրինակ՝ ինչպես կառավարել թիմային աշխատանքը, ինչպես գրել ծրագրեր և այլն) կամ ունեն երևույթի մասին ուշագրավ գնահատականներ, դիտարկումներ, որոնք մասնագիտական, հետազոտական կամ աշխատանքային փորձի արդյունք են:

Փորձագիտական հարցման նպատակներով են իրականացվում նոմինալ խմբային հարցման մեթոդը, դելֆյան տեխնիկան և ուղեղների գրոհը:

- Նոմինալ խմբային մեթոդի պարագայում, միևնույն կամ համանման հետաքրքրություն ունեցող անհատներ ընդգրկվում են խմբի մեջ, սակայն կարող էին երբեք չհանդիպել միմյանց: Նրանք զրուցավարի կամ, ինչպես խմբային հարցումների պարագայում ընդունված է ասել, մոդերատորի հարցերին պատասխանում են առանձին-առանձին՝

բոլորը հնչեցնում են կարծիքը տրված հարցի շուրջ: Պատասխանները հետազայում ընդհանրացվում են: Մեթոդի նպատակն է կարճ ժամանակահատվածում՝ մեկ հանդիպմամբ, լսել միևնույն կենսափորձն ունեցող կամ համանման իրավիճակում գտնվող մարդկանց կարծիքները և չեզոքացնել խմբի ազդեցությունը անհատի պատասխանի վրա (Tague, 2004, pp. 364-365):

- Դելփյան տեխնիկան կիրառվում է փորձագիտական կանխատեսման նպատակով: Փորձագետների միևնույն խումբը մի քանի անգամ մասնակցում է հարցմանը՝ պատասխանում է նույն հարցերին ժամանակային ինտերվալների պայմաններում: Հարցումների շրջանները կրկնվում են այնքան ժամանակ, մինչև փորձագետների կարծիքը նույնանում է:

- Ուղեղների գրոհը կիրառվում է հետաքրքրող խնդրի նկատմամբ նոր գաղափարներ, առաջարկներ ու լուծումներ առաջադրելու նպատակով: Գաղափարների առաջադրման փուլին հաջորդում է վերլուծության, առաջարկների ու լուծումների առաջադրման փուլը: Ուղեղների գրոհը կարող է կազմակերպվել մեկ անգամ փորձագիտական մեկ խմբի հետ կամ մի քանի անգամ նույն կամ տարբեր փորձագետների հետ՝ կախված հետազոտության խնդրի բարդության և այն հետազոտելու ռազմավարության հետ (Cory and Slater, 2003):

- Բանավեճի մեթոդը նման է ուղեղների գրոհին, սակայն վերջինիս հիմնական առանձնահատկությունն այն է, որ պարտադիր է ճշգրտել, հիմնավորել ու մանրամասնել փորձագետների կողմից հնչած կարծիքները: Այստեղ հնչած կարծիքների քննադատությունը պարտադիր ու կարևոր պայման է, ի տարբերություն ուղեղների գրոհի, երբ ամենանոր ու քննադատելի կարծիքը ողջունելի է և որտեղ մասնակիցները փորձում են չքննադատել մեկը մյուսին:

Անհատական փորձագիտական հարցման ուղեցույցը նման է խորքային հարցման ուղեցույցին, սակայն հարցադրումները կարող են բարդ լինել, քանի որ փորձագետները կարող են պատասխանել նաև բարդ կամ շատ մասնավոր հարցերի: Փորձագիտական խմբային հարցման ուղեցույցը շատ նման է ֆոկուս խմբային հարցման ուղեցույցին, սակայն այն պատրաստվում է քննարկվող թեմայի նկատմամբ առավել համընդգրկուն,

բարդ կամ խիստ մասնավոր մոտեցմամբ:

2.3. Խմբային հարցազրույց, ֆոկլուս խմբային քննարկում

Վերը ներկայացված խմբային փորձագիտական հարցման տեսակները, ինչպես նշվեց, խմբային հարցման տարատեսակներ են:

Խմբային հարցումն առհասարակ հարցազրույց է, որի պարագայում տեղեկատվությունը հավաքվում է մի խումբ մարդկանցից, ովքեր հարցազրույցի են ենթարկվում միաժամանակ և մասնակիցների պատասխաններն ի հայտ են գալիս քննարկման արդյունքում՝ ասոցիատիվ կերպով հիմնվելով իրենց անհատական փորձի վրա: Լինում են դիադիկ, տրիադիկ, խմբային և ֆոկլուս խմբային հարցազրույցներ: Դիադիկ և տրիադիկ հարցազրույցերն իրականացվում են, հիմնականում, սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրների, միջանձնային հարաբերությունների ուսումնասիրության նպատակով:

Հասարակական խմբային հարցազրույցի և ֆոկլուս խմբային քննարկման առանցքային տարբերությունն այն է, որ առաջինի պարագայում քննարկումը տեղի է ունենում անհատ ռեսպոնդենտների և մոդերատորի միջև, իսկ երկրորդի պարագայում՝ խմբի և մոդերատորի: Խմբային հարցազրույցի համար մասնակիցների թիվը կարող է տատանվել 4-15, իսկ ֆոկլուս խմբային քննարկման համար խորհուրդ է տրվում նվազագույնը 8 և առավելագույնը 12 մասնակցի ներկայությունը: Ֆոկլուս խմբային քննարկման համար մասնակիցները ընտրվում են ավելի զգուշորեն, նույնիսկ չափումներ են արվում մասնակիցների շրջանում նրանց որպես խումբ նախապես գնահատելու համար, որպեսզի ապահովվի խմբային քննարկումը մոդերատորի հետ, քանի որ մոդերատորին հակացուցված է խթանել խմբային դինամիկա բուն հարցազրույցի ընթացքում:

Խմբային հարցազրույցի առավելությունն այն է, որ որակական հետազոտության շրջանակներում կարծիքը հավաքվում է տարբեր մարդկանցից, խումբը ճշգրտում է տեղեկատվությունը, խումբը խթան է հանդիսանում տեղեկատվության տրամադրման համար, հավաքագրվում է բազմակողմանի տեղեկատվություն, քիչ ժամանակատար է:

Մեթոդի թերությունն այն է, որ խումբը կարող է ճնշել անհատների կարծիքը, դժվար է հավասարակշռել հարցազրույցը: Լիդերության խնդիր է առաջանում, քանի որ խմբում լինում են առաջատար կարծիք արտահայտողներ կամ առավել ակտիվ մասնակիցներ, ովքեր իրենց ակտիվությամբ ճշնում են մյուսներին: Սովորաբար, տեղեկատվության ընդհանրացման դժվարություններ են առաջանում, և խմբի տեսակետը կարող է չարտահայտել լայն զանգվածի տեսակետ:

Խմբային հարցազրույց վարող մոդերատորը պետք է ունենա սոցիալական հոգեբանության ոլորտում որոշակի պատրաստվածություն (Թադևոսյան, 2006, էջ 234): Նա պետք է հարցազրույցների ընթացքում ապահովի սոցիալական ինտեգրումը, հայելային արձագանքը, խմբի մասնակիցները պետք է զգան, որ իրենց տեսակետը լսում են և կիսում են կամ հաշվի են առնում խմբի այլ անդամները: Նա պետք է ապահովի հարցազրույցի «խտացման» երևույթը, երբ խմբի մոտ առաջանում է խմբային գիտակցություն և նրանք առավել արդյունավետ են մտնում քննարկման մեջ:

Առանձին անդրադառնալով ֆոկուս խմբային քննարկմանը՝ հարկ է նշել, որ այն բավականին լայն տարածում է ստացել սոցիալական հետազոտություններում: Միննույն ժամանակ, այն հատկապես հարմար է սոցիալական միջամտության ծրագրերի արդյունավետության գնահատման համար: Վերևում արդեն նշվեց, որ 6-12 մասնակիցների քանակն է խորհուրդ տրվում այդ տիպի քննարկումների կազմակերպման համար, քանի որ 6-ից քիչ մասնակիցների համար քննարկումը հետաքրքիր չի ստացվի, իսկ 12-ից առավել մասնակիցների պարագայում մոդերատորը կդժվարանա իրականացնել իր աշխատանքը: Առհասարակ, խորհուրդ է տրվում ֆոկուս խմբային քննարկման մասնակիցներին քննարկմանը հրավիրելիս փորձել ավելի շատ մարդու հրավիրել, քանի որ ոչ բոլորը, ի վերջո, կկարողանան զալ, մասնակցել քննարկմանը, իսկ հետազոտության համար էական է ապահովել մասնակիցների գոնե նվազագույն քանակը:

Եթե ֆոկուս խումբը որակական հետազոտության հիմնական մեթոդ է հանդիսանում, ապա պետք է իրականացնել առնվազն երեք ֆոկուս խմբային քննարկում, որպեսզի հնարավոր լինի սոցիալական խմբի համար ընդհանրացումներ անել և ստանալ առավել

հավաստի տեղեկություններ: Եթե ֆոկուս խմբային քննարկումն իրականացվում է հետազոտության ավարտական փուլում՝ հաջորդելով իրականացված քանակական վերլուծությանը, ապա էական է քանակական տվյալների նախնական վերլուծության հիման վրա ձևավորել ֆոկուս խմբային քննարկման ուղեցույցը:

Յուրաքանչյուր ֆոկուս խմբային քննարկում պլանավորելիս հարկավոր է ուշադրություն դարձնել քննարկմանը հրավիրվող խմբի սոցիալ-դեմոգրաֆիական առանձնահատկություններին:

Ստորև ներկայացված է ուսուցիչների հետ ֆոկուս խմբային քննարկման համար նախատեսված օրինակելի ուղեցույց, որը մշակվել է ՀՌԿԿ-Հայաստանի հետազոտական խմբի կողմից: Այս ձեռնարկի էջ 13-ում ներկայացված տեղեկատվական և համաձայնության թերթիկը նույնպես պատրաստվել էր նույն որակական հետազոտության շրջանակներում:

Ներածություն:

1. Ողջույնի խոսք:

[Մողերատոր] Ներկայացրեք Ձեզ և Ձեր օգնականին և ուշադրություն հրավիրեք **համաձայնության թերթիկի և դեմոգրաֆիական թերթիկի** վրա (մասնակիցները պետք է նշեն իրեն տարիքը, սեռը, դասավանդվող առարկան, դպրոցում աշխատելու տարիները): Մասնակիցները կարող են պատասխանել թերթիկներում առկա հարցերին այն ընթացքում, երբ Դուք տրամադրում եք ներածական տեղեկություններ:

Ներկայացրեք:

- Ովքե՞ր ենք մենք և ի՞նչ ենք ցանկանում իրականացնել:
- Ի՞նչ է արվելու տեղեկատվության հետ, որը մենք ցանկանում ենք ստանալ:
- Ինչո՞ւ ենք մենք խնդրել ուսուցիչներին մասնակցել քննարկմանը:

2. Գործընթացի բացատրություն:

[Մողերատոր] հարցրեք խմբի ներկայացուցիչներին՝ որևէ մեկը նախկինում մասնակցել է ֆոկուս խմբային քննարկման: Բացատրեք, որ ֆոկուս խմբային քննարկումները կիրառվում են հասարակագիտության մեջ որպես որակական տեղեկատվության հավաքագրման հիմնարար աղբյուր:

Ֆոկուս խմբերի մասին:

- Մենք տեղեկանում ենք Ձեզանից (դրական և բացասական երևույթների մասին):
- Մենք չենք ձգտում հասնել փոխհամաձայնության, մենք տեղեկատվություն ենք ստանում և Ձեր կարծիքները կարող են չհամընկնել:
- Մենք չենք ցանկանում ստանալ բազմաբնույթ լայնածավալ տեղեկատվություն, մենք ցանկանում ենք խոսել առաջնահերթության տեսանկյունից ամենակարևոր հարցերի մասին:
- Մեր իրականացրած այս ուսումնասիրության շրջանակներում մենք գտնում ենք, որ կարող ենք տեղեկատվության ստանալ փոքրաթիվ մարդկանց խմբից: Մա մեզ թույլ կտա հասկանալու Ձեր քննարկման ենթատեքստը և խորապես հասկանալ քննարկվող թեմաները:

Կազմակերպումը:

- Ֆոկուս խմբերը կտևեն մոտավորապես մեկ ժամ (60 րոպե):
- Ազատ զգացեք տեղաշարժվելու, Ձեր տեղը փոխելու, սուրճ պատրաստելու, քաղցրավենիքից օգտվելու հարցում:
- [Մողերատոր] Ցույց տվեք էլքի դուռը և ներկայացրեք տեղանքը:

3. Հաստատեք քննարկման կանոնակարգը:

Խնդրեք խմբի ներկայացուցիչներին առաջարկել հիմնարար կանոններ: Կարճ քննարկումից հետո, վստահացեք, որ բոլորը ուշադիր են ներքոնշվածին:

- Բոլորը պետք է մասնակցեն քննարկմանը:
- Բարձրաձայնված տեղատվությունը պետք է գաղտնի ու անանուն մնա:
- Ուշադրությունը պետք է կենտրոնացնել խմբի վրա և չշեղվել կողմնակի խոսակցություններ ծավալելով:
- Հեռախոսները պետք է անջատված լինեն, եթե հնարավոր է (նախապես զգուշացրեք կարևոր մարդկանց):
- Մասնակիցներին կոչ է արված վայելել ծավալվող քննարկումը և մասնակցել հաճույքով:

4. Միացնել ձայնագրիչը

5. Հարցրեք խմբին՝ կան արդյոք հարցեր մինչև քննարկումը կսկսվի և հասցեք հարցերը, եթե կան:

6. Սկիզբ

- Պտտվեք սեղանի շուրջ:

[Մոդերատոր] Քննարկումը սկսվում է, վստահացեք, որ մասնակիցները ժամանակ ունեն պատասխանելուց առաջ մտածելու համար և շատ արագ մի անցեք հաջորդ հարցադրմանը: Կիրառեք ուղղորդող հարցադրումները՝ հավաստիանալով, որ քննարկման բոլոր թեմաները սպառվում են, բայց առաջ անցեք, երբ նկատելի է, որ տրամադրվող տեղեկությունը կրկնվում է:

Թեմա 1. Համացանցը և թվային աշխարհը զգալիորեն ձևափոխել են մեր իրականությունը: Եկեք սկսենք մեր քննարկումը՝ անդրադառնալով աշակերտների առցանց և ցանից դուրս վարքին:

Ուղղորդող հարցադրումներ:

- Ի՞նչ դիտարկումներ (ընդհանուր կամ մասնավոր) ունեք աշակերտների առցանց վարքի հետ կապված: Որտեղի՞ց էք այս մասին տեղեկություններ ստանում: Տարբերություն կա՞նկատում էք առցանց և ցանից դուրս վարքի միջև:
- Ձեռքբերումներ, հնարավոր վտանգ, պաշտպանիչ նախաձեռնություններ, առցանց/ցանցից դուրս հավասարակշռության պահպանում:
- Մշակույթ
 - Փոխհարաբերությունները, սոցիալական մեդիայի ընկալումները, ի՞նչ առցանց հարթակներ են աշակերտներն առավելապես կիրառում:
- Աշխատանքային պայմանները

- Համացանցի հասանելիություն, սարքավորումներ, ինքնավերահսկողություն, վերահսկողություն ծնողների կողմից, վերահսկողություն/ուղղորդում դպրոցի կողմից:
- Կա կրթական վերջնարդյունքների նկատմամբ պարտավորության զգացում՝ կապված առցանց հաղորդակցության հետ:
 - Աշխատանքային/դասավանդման բովանդակությունը, ուսուցիչների պատասխանատվության զգացումը:

Թեմա 2: Այժմ մտածենք ժողովրդավարության և ժողովրդավարական մշակույթի հաստատման կարողությունների մասին: Նախ՝ սահմանենք ժողովրդավարությունը, որպես մարդկանց խմբերը կազմակերպելու հնարավոր ձև, որը վերաբերում է երկրի, փոքր գյուղի կամ նույնիսկ դասարանի կառավարմանը:

Ուղղորդող հարցադրումներ:

- Ի՞նչ է անհրաժեշտ հայ մարդկանց, որ լավ, անվտանգ, ավելի առողջ ապրեն և մեծանան:
- Ինչպե՞ս կարող է դպրոցը նպաստել, որ աշակերտները ժողովրդավար ձևով հաղորդակցվեն:
- Տեսե՞ք նկար 1-ը, այն ներկայացնում է կարողությունները ժողովրդավարական մշակույթի համար: Իրականացնենք ինքնագնահատման կարճ գործընթաց. գնահատե՞ք, թե որքանով եք դասավանդելիս հասցեում այս կարողությունները: Խնդրում ենք հաշվի առնել, որ Ձեր դասավանդման փորձը պարտադիր չէ, որ հասցեի բոլոր կարողությունները կամ, եթե այն չի հասցեում դրանցից մի քանիսը հիմա, ապա կարող է հասցեել ապագայում: Այսպես, հիմա խնդրում ենք ներկայացնել առկա իրավիճակը ճշգրտորեն՝ այնպիսին, ինչպիսին, որ այն կա:
 - Օգնականը ցույց է տալիս նկարը, ուսուցիչներին է տրամադրում կարողությունների սահմանումները (ԵԽ, Կարողություններ ժողովրդավարական մշակույթի համար, 2016), որ դրանք կիրառվեն գնահատման ընթացքում և մոդերատորի հետ միասին տարածում է ինքնագնահատման քարտ 1-ը:

Թեմա 3: Հիմա, երբ իրականացրինք ինքնագնահատումը և վերընթերցեցինք կարողությունների սահմանումները, քննարկենք կարողությունները թվային դարաշրջանում:

Ուղղորդիչ հարցեր:

- Ի՞նչ կարողություններ է անհրաժեշտ մարդկանց և աշակերտներին առցանց ժողովրդավարական ձևով հաղորդակցվելու համար:
- Ի՞նչ կարողություններ են անհրաժեշտ աշակերտներին, որ նրանք տարբերեն ճիշտ ու սխալ, կարևոր և անկարևոր, փտանգավոր ու անվտանգ տեղեկատվությունը և հաղորդակցությունը առցանց հարթակներում:

- *Ձեզ հայտնի՞ են մարդու իրավունքների խախտման դեպքեր առցանց հարթակներում: Եթե այո, ապա նկարագրեք: Եթե ոչ, ապա խոսեք հնարավոր խախտումների մասին:*

Թեմա 4: Եվ վերջապես, մեր քննարկումն արդյունավետ կերպով եզրափակելու համար, մտածենք, թե ինչպես է հնարավոր փոխանցել ժողովրդավարական կարողություններն առցանց տարածության կիրառմամբ:

Ուղղորդիչ հարցեր:

- *Արդյո՞ք այդպիսի փորձ ունեք, երբ կիրառել էք առցանց մեդիան դպրոցական աշխատանքներ համակարգելու համար (Ֆեյսբուքի խմբեր, այլ հարթակներ): Արդյո՞ք սա արդյունավետ է:*
- *Տեղյա՞կ էք առցանց հասանելի ու մարդու իրավունքների կրթությանը վերաբերող աղբյուրների և որքանո՞վ են դրանք կիրառվում ուսուցիչների և աշակերտների կողմից:*
- *Կարո՞ղ ենք կիրառել առցանց մեդիան և տարբեր հարթակները դասավանդումը բարելավելու և ժողովրդավարական կարողությունները փոխանցելու համար: Ինչպե՞ս է առցանց տարածությունը ձևավոխում մեր դպրոցական կյանքը:*
- *Արդյո՞ք ուսուցիչները կարիք ունեն մեդիա գրագիտության դասընթացների, ի՞նչ դասընթացների:*
- *Ինչպե՞ս կարող է կրթական ծրագիրը հաշվի առնել առցանց տարածությունը և ապահովել ժողովրդավարական կարողությունների որակյալ փոխանցումը:*
- *Ինչպե՞ս կարող ենք վստահության մթնոլորտ ստեղծել և վստահել միմյանց, պաշտպանել մարդու իրավունքներն առցանց հաղորդակցություններում (ուսուցիչ-ուսուցիչ, ծնող-ուսուցիչ, աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-աշակերտ, ծնող-աշակերտ, ծնող-ծնող):*

Այսպիսով, մենք ավարտում ենք մեր քննարկումը: Ծնորհակալություն գալու և ձեր մտքերով կիսվելու համար: Եթե ունեք հավելյալ տեղեկատվություն, որը չէք տրամադրել ֆոկուս խմբային քննարկման ընթացքում, ազատ զգացեք մեր հետ կապվելու հարցում, մենք սիրով կշարունակենք այսօրվա քննարկումը առանձնապես ձեր հետ:

Ֆոկուս խմբի համար անհրաժեշտ նյութերը և պարագաները:

- Համաձայնության և դեմոգրաֆիական տվյալների հավաքագրման թերթիկներ
- Ինքնագնահատման քարտ 1 և կարողությունների սահմանումները մասնակիցներից յուրաքանչյուրի համար:
- Նոթատետրեր և գրիչ/մատիտ մասնակիցներից յուրաքանչյուրի համար:
- Ֆոկուս խմբային քննարկման ուղեցույցը մոդերատորի համար:
- Երկու-երեք ձայնագրիչ, քանի որ մեկը կարող է պատահաբար անսարքին լինել ու չձայնագրել:

- Չայնագրիչների մարտկոցներ:
- Նոթբուք, նոթատետր և գրիչ/մատիտ օգնականի համար:
- Մասնակիցների հյուրասիրություն:

2.4. Փաստաթղթերի վերլուծություն

Մինչ փաստաթղթերի վերլուծության մեթոդը ներկայացնելը, հարկավոր է սահմանել «փաստաթուղթ» հասկացությունը: «Փաստաթուղթ» հասկացությունը սոցիոլոգիայում սահմանվում է որպես մարդու կամ հասարակության կողմից հատուկ նպատակներով ստեղծված այն առարկան, որը կոչված է տեղեկատվություն կրելու: Մասնավորապես, էլեկտրոնային կայքերը, էլեկտրոնային կրիչները, արխիվային փաստաթղթերը, գրքերը, չտպագրված նյութեր և այլն:

- Փաստաթղթերի որակական կամ ավանդական վերլուծության մեթոդը ենթադրում է վերլուծական աշխատանք հետազոտության շրջանում ուսումնասիրվող երևույթի, մեկնաբանությունների, վկայությունների կամ իրադարձությունների վերաբերյալ:

- Փաստաթղթերի բովանդակային վերլուծության մեթոդը ենթադրում է համակարգված, օբյեկտիվ, քանակական նկարագրություն, որը բխում է հետազոտողի կամ վերլուծաբանի կողմից մշակված կատեգորիաներից:

Ըստ էության, չկա հետազոտություն, որի շրջանակներում այս կամ այն կերպով չիրականացվի փաստաթղթերի վերլուծություն: Հենց մասնագիտական գրականության ուսումնասիրությունն արդեն ենթադրում է փաստաթղթերի ավանդական վերլուծություն: Տվյալ ոլորտում արված նախկին հետազոտական գործիքները, վերլուծական զեկույցները, ձայնագրությունները, պատմական, գեղարվեստական նյութերը, նկարներ և այլն՝ սրանք բոլորը փաստաթղթերի օրինակ են: Մինևույն ժամանակ, եթե փաստաթղթերի վերլուծությունն ընտրվում է որպես հետազոտության հիմնական մեթոդ, այն պետք է հիմնավորված լինի որպես այդպիսին: Արդի տեղեկատվական դարաշրջանում, երբ տեղեկատվության հետ միասին շատացել են փաստաթղթերի տեսակներն ու ծավալը, մարտահրավեր է հետազոտության նպատակով անհրաժեշտ ու հիմնարար փաստաթղթերի ընտրությունը: Հետազոտության տեսանկյունից, կարևոր է, որ փաստաթղթերը լինեն կայուն կամ հիմնավոր աղբյուրներից, հարուստ լինեն տեղեկատվությամբ:

Փաստաթղթերի վերլուծության տարատեսակ է այսօր ՔՀԿ շրջանում լայն կիրառում

ստացած «գրասենյակային վերլուծությունը (անգլ.՝ desk research)»:

Փաստաթղթերի ավանդական վերլուծության ժամանակ հետազոտողը պետք է առաջադրի հետևյալ հարցերը, որոնք թույլ կտան վերլուծել տեքստի բովանդակությունը. ինչպես է տեքստը շարադրված, ինչպես է ընթերցվում, ով է տեքստի հեղինակը, ով է տեքստի լսարանը, ինչ նպատակների է տեքստը ծառայում, ինչ առիթով է այն գրված, ինչ տեղեկատվություն է ներառում, ինչ թեմատիկայով, ինչ հիմնական հասկացություններ են ներկայացված, ինչ փաստագրումներ կան, ինչ բացթողումներ կան, ինչ է ներկայացվում որպես «ընդունված» եղելություն, ինչի կարիք ունի ընթերցողը, որ հասկանա այդ տեքստը (Թադևոսյան, 2006, էջ 305; Hammersley & Atkinson, 1983, p. 142-143):

Փաստաթղթերի քանակական վերլուծությունը ենթադրում է փաստաթղթի բովանդակության կոդավորում՝ փաստաթղթի ընթերցում՝ ըստ կատեգորիաների, որոնց տրվում են կոդեր՝ 1, 2 և այլն: Օրինակ, լրատվական նյութում «մենք» բառը/կատեգորիան կարող է կոդավորվել «1» և վերլուծության ընթացքում կհաշվարկվի, թե քանի անգամ է հանդիպել այդ կոդը, ինչ կապի մեջ է այն այլ կոդերի հետ:

2.5. Դիտարկում

Թերևս յուրաքանչյուր անհատ կյանքի իրավիճակներում դիտարկում իրականացրել է: Այսինքն, ուշադիր է եղել միջավայրին, մտածել է, թե ինչու են մարդիկ այս կամ այլ կերպ վարվում, փորձել է մարդկանց շարժուձևից հասկանալ, թե ինչ են նրանք ցանկանում արտահայտել, նայել է սենյակի կահավորանքին ու մտածել, թե մարդիկ ինչու են այդ գույներով, իրերով կամ նկարներով կահավորել, լցրել սենյակը՝ ինչ ճաշակի տեր մարդիկ են նրանք: Այնուամենայնիվ, գիտական նպատակներով կիրառվող դիտարկման մեթոդը տարբերվում է իր պլանավորման աստիճանով, նպատակաուղղվածությամբ և համակարգվածությամբ: Սոցիոլոգիայում դիտարկման մեթոդը սկիզբ է առել Միացյալ Նահանգներում՝ Չիկագոյի դպրոցից, որը ազգագրական հետազոտության զարգացման կենտրոն էր: Այս դպրոցի ներկայացուցիչները գտնում էին, որ հետազոտողը պետք է միշտ հասարակության մեջ «տեսնի» իր մոտեցումների հաստատումը կամ հերքումը:

Դիտարկումը, որպես հասարակագիտական հետազոտության մեթոդ, հետազոտողի կողմից դիտարկման վայրի կամ օբյեկտի վերաբեյալ տեղեկատվության արձանագրումն է: Այն, որպես հետազոտության հիմնական մեթոդ կիրառելի է, երբ տեղեկատվության հավաքագրման համար անհրաժեշտ է հնարավորինս չեզոքացնել հետազոտվողների անձնական մոտեցումները: Այս մեթոդի առավելությունը տեղեկատվության հավաքագրումն է բնականորեն առկա իրավիճակում, իրադարձությունների ձևավորման իրական ժամանակահատվածում, բայց այն ունի նաև օբյեկտիվորեն ու սուբյեկտիվորեն պայմանավորված թերություններ: Օբյեկտիվորեն, իրավիճակները հնարավոր չէ վերարտադրել, և դրանք եզակի են, դրանցից ստացված տվյալները կարող ենք միայն զգուշությամբ ընդհանրացնել: Սուբյեկտիվորեն, թերությունն այն է, որ առկա է հետազոտողի գործոնը՝ հատկապես, ընդգրկված դիտարկման պարագայում: Ընդհանուր առմամբ, դիտարկման մեթոդը հետազոտողից պահանջում է լուրջ մասնագիտական պատրաստվածություն: Դիտարկումը որպես մեթոդ տարբերվում է՝ ըստ դիտարկողի և դիտարկվողների փոխհարաբերության. (1) երբ դիտարկվողները գիտակցում են, որ իրենք դիտարկվում են, (2) երբ դիտարկվողները չեն գիտակցում, որ իրենք դիտարկվում են: Դիտարկման երկրորդ տեսակն է անվանվում «ընդգրկված»: Դիտարկումը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու սոցիալական դերային դրսևորումներ, փոխհարաբերություններ, իրավիճակներ ու իրավիճակային առանձնահատկություններ, կոլեկտիվ/խումբ - անհատ փոխհարաբերություններ, կոլեկտիվ գիտակցություն, փոքր ու յուրահատուկ սոցիալական խմբեր, ենթամշակույթ: Դիտարկման մեթոդը կարելի է կիրառել այլ մեթոդներից ստացված տեղեկատվությունը փոխլրացնելու, ինչպես նաև առաջնային/հիմնական տեղեկատվության ստացման համար: Դիտարկում մեթոդը կիրառելիս պետք է հաշվի առնել՝ ովքեր են դիտարկվողները, ինչ իրավիճակում է տեղի ունենում դիտարկումը, որն է դիտարկվողների վարքի հիմնական նպատակը, ինչպիսին է նրանց սոցիալական վարքը, ինչ ժամանակահատվածում և կոնկրետ ինչ իրավիճակի առկայությամբ է այն տեղի ունենում:

Դիտարկումն իրականացվում է հետևյալ հիմնական փուլերով.

- նախապատրաստական փուլ,

- հետազոտության վայրի ընտրություն և մուտքի ապահովում,
- մուտք հետազոտական դաշտ, կապի ստեղծում,
- սոցիալական դերի հաստատում,
- տեղեկատվության հավաքագրում,
- տեղեկատվության ընդհանրացում, վերլուծություն և վարկածների առաջադրում,
- տեսական ընտրանքի կառուցում,
- առանցքային տեղեկատվությունների հետ հարցազրույցների անցկացում,
- դիտարկման ավարտ,
- վերլուծությունն և հաշվետվության կազմում:

Կախված դիտարկման մեթոդի կիրառման համար ստեղծված գործիքի՝ դիտարկման քարտի կառուցվածքից, դիտարկումը լինում է կառուցվածքայնացված – չկառուցվածքայնացված, ինչպես արդեն նշվեց, այն լինում է ընդգրկված – ոչ ընդգրկված: Այն լինում է դաշտային՝ սոցիալական իրականության բնական պայմաններում, և լաբորատոր:

Դիտարկման տարածության ընտրությունն իրականացվում է՝ ըստ դիտարկման վայրի, դիտարկման դերակատարների ընտրության, դիտարկման գործողությունների որոշակիացման:

2.6. Որակական տվյալների վերլուծություն և ներկայացում

Որակական հետազոտության իրականացման հիմնանպատակն է հասկացությունների զարգացումը, սոցիալական երևույթների որակական ասպեկտների ըմբռնումը առավելապես բնական՝ ոչ էքսպերիմենտալ պայմաններում: Որակական հետազոտության տվյալների վերլուծության գործընթացը միտված է նշանակությունների, կենսափորձի և մոտեցումների վերհանմանը: Մասնավոր վերլուծական նպատակները տարբերվում են՝ կախված հետազոտության նպատակներից. վերլուծությունը կարող է միտված լինել ենթատեքստի հասկացմանը, օրինակ՝ ինչպե՞ս են տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային և կազմակերպական գործոնները ազդում որևէ երևույթի

վրա: Այն կարող է ուղղված լինել մարդկանց պատկերացումները, մոտեցումները, փորձը բացահայտելուն, այն կարող է նաև ուղղված լինել մարդկանց միջև փոխհարաբերությունների հասկացմանը: Որակական վերլուծությունն իրականացվում է՝ հիմնվելով մեթոդների միջոցով հավաքագրված տեղեկատվության սղագրման վրա: Այս իմաստով, յուրաքանչյուր տվյալ վերածվում է տեքստի, այնուհետև՝ ենթարկվում վերլուծության: Հարցազրույցների, նաև խմբային ու ֆոկուս խմբային քննարկումներից ստացված ձայնագրությունները սղագրվում են բառ առ բառ, այնուհետև սկսվում է վերլուծության գործընթացը: Դիտարկման պարագայում թվայնացվում են հետազոտողի կատարած նշումները: Որակական տվյալների վերլուծության պարագայում կարևոր է շեշտադրումը՝ կենսափորձ, կարծիքներ, ընկալումներ կամ գիտելիքներ:

Հետազոտական տվյալների որակական վերլուծությունը հիմնականում հիմնված է մեկնողական՝ ինտերպրետատիվ փիլիսոփայության վրա: Ընդհանուր առմամբ, վերլուծական մոտեցումը լինում է դեդուկտիվ կամ ինդուկտիվ:

- Դեդուկտիվ՝ ընդհանուրից մասնավոր, մոտեցման պարագայում վերլուծության հիմքում դրվում է հետազոտական հարցը և իրականացվում է համընդհանուր պատկերի վերլուծություն՝ ընդհանրացումների իրականացման ճանապարհով:
- Ինդուկտիվ՝ մասնավորից ընդհանուր, երբ առանձնացվում են իմաստային միավորներ կամ հիմնական հասկացություններ, որոնք այնուհետև խմբավորվում են՝ ըստ թեմաների, նարատիվների կամ դիսկուրսների՝ կախված վերլուծական մեթոդաբանությունից:

Կետերը, որոնց վրա հարկ է ուշադրություն դարձնել հետևյալն են.

- որն է ստացված տվյալների հիմնական «հաղորդագրությունը», ինչ են տվյալները «ասում/պատմում»,
- ինչպիսին է հիմնական տեղեկատուների մոտեցումը, ինչ ընկալումներ, դիրքորոշումներ են արտահայտվել,
- որքանով է շեշտադրվում իրական, առկա իրավիճակը կամ հիպոթետիկ/իդեալական իրավիճակը:

Եթե որակական տվյալների վերլուծությունը ներկայացնենք որպես քայլ առ քայլ գործընթաց, կստացվի ստորև ներկայացված գործընթացը:

Քայլ 1: Սղագրել տվյալները, մաքրել, դասավորել, ֆորմատավորել, տող առ տող համարակալել աղագրությունը:

Քայլ 2: Կարդալ ու վերընթերցել բոլոր սղագրությունները, ստացված ամբողջ նյութը այնքան, մինչև որոշակիացվի վերլուծության շրջանակը՝ բացատրական, երբ վերլուծությունը պատասխանում է հետազոտական հարցինկամ հետախուզական, երբ վերլուծությունը հնարավորինս մանրամասն ներկայացնում է ստացված տվյալները, իսկ վերլուծաբանն առաջնորդվում է հենց տվյալներով: Այս փուլում վերլուծաբանը ուրվագծում է տվյալների կոդավորման իր սխեման:

Քայլ 3: Տվյալների կոդավորում, կոդավորման սխեմայի կիրառում, տվյալների մուտքագրում որակական տվյալների վերլուծության համակարգչային ծրագրային փաթեթ՝ օրինակ, [MAXQDA](#) կամ [NVIVO](#):

Քայլ 4: Խմբավորել կոդերը կամ իմաստային միավորները՝ ըստ թեմաների, իրականացնել թեմատիկ վերլուծություն:

Քայլ 4-ով ավարտվում է հետախուզական վերլուծությունը:


Քայլ 5: Կրկնվող թեմաների խմբավորում, հաջորդական իրադարձությունների ներկայացում, վարկածների ստուգում:

Գոյություն ունեն որակական վերլուծության բազմաթիվ տեսակներ, օրինակ՝ բովանդակային վերլուծությունը, նարատիվների՝ պատումների, վերլուծությունը, դիսկուրս՝ քննախոսական վերլուծություն և այլն:

Որակական հետազոտությունների արդյունքների վերլուծության համար կիրառվող համակարգչային ծրագրերը դեռ լայն կիրառում չեն ստացել որակական հետազոտությունների մասնագետների շրջանում, քանի որ նրանցից շատերը գտնում են, որ համակարգիչը չի կարող բովանդակային, համատեքստային նրբություններ զգալ, և հետազոտողի ներգրավվածությունն այս գործընթացում անփոխարինելի է: Նման ծրագրերը, սակայն, զգալի հեշտացնում, և ավելի դյուրին են դարձնում որակական տեղեկատվության ներկայացումը՝ շեղելով ուշադրությունը տեքստից

դեպի պատկերներ ու թվեր: Այս ծրագրերի միջոցով հնարավոր է առավել հեշտորեն անցնել կողավորման փուլը, համակարգված կերպով արխիվացնել տվյալները: Երբեմն ստացվում է որակական տեղեկատվությունից որոշակի քանակական բաղադրիչներ դուրս բերել, ինչը հարստացնում ու ավելի համոզիչ է դարձնում նյութի ներկայացումը:


3. Հետազոտության մեթոդներ. քանակական



3.1. Հասարակական երևույթների զանգվածային բաշխումը որպես բնական երևույթ. Գալթոնի տուփի «հաղորդագրությունը» հետազոտողներին

Քանակական մեթոդների օգնությամբ հետազոտողները դիմում են այն ժամանակ, երբ խնդիր ունեն բացահայտելու հասարակական երևույթների բաշխումը, տարածվածությունը, հասարակության կարծիքը այս կամ այն խնդիր վերաբերյալ, և այլն: Այսինքն, այն դեպքերում, երբ երևույթները անհրաժեշտ է նկարագրել թվերի ու տոկոսների միջոցով: Քանակական մեթոդներին նախապատվություն տալիս պետք է հիշել, որ, ի տարբերություն որակական մեթոդների, երբ բացառությունները հետաքրքիր են հետագա ուսումնասիրությունների համար, քանակականի դեպքում շեշտը դրվում է օրինաչափությունների բացահայտման վրա: Այս դեպքում բացառությունները հաստատում են օրինաչափություններն ու կանոնները (Jones, 2010): Քանակական հետազոտություններ իրականացնելիս պետք է հիշել հասարակական երևույթների **նորմալ բաշխման մասին**: Ի՞նչ է նորմալ բաշխումը և ինչպես կարելի է այն կիրառել հասարակական երևույթների նկարագրության ժամանակ: Ստորև բերված գծապատկերում կարող եք տեսնել նորմալ բաշխման կորը, որը կարելի է կիրառել նաև հասարակական երևույթների նկատմամբ: Նախապես ենթադրվում է, որ հետազոտվող հատկանիշի նկարագրության ժամանակ հանրության հիմնական մասը՝ տվյալ դեպքում 68,2%-ը, համախմբվում է տվյալ փոփոխականի միջին արժեքի շուրջ: Միջինից տատանման չափից կախված նորմալ բաշխման կորը կարող է ավելի կամ պակաս սուր տեսք ունենալ: Իհարկե, նման պատկեր կարող ենք ստանալ միայն այն դեպքում, երբ հետազոտությունն իրականացել է պատահականության սկզբունքի պահպանմամբ:

Պատկեր 1. Նորմալ բաշխման կորը (EBM, 2014)



Կորի անկյունային հատվածներում են գտնվում հանրության հիմնական մասից տարբերվողները. օրինակ՝ շատ եկամուտ ունեցողները և քիչ եկամուտ ունեցողները, շատ բարձրահասակները ու շատ ցածրահասակները, և այլն: Բովանդակային առանձնահատկությունները կախված են չափվող երևույթի առանձնահատկություններից:

Քանակական տվյալների վերլուծությունն իրականացվում է վիճակագրական վերլուծական համակարգչային ծրագրերի միջոցով (SPSS, SATAT, R և այլն), իսկ վերջիններս թույլ են տալիս պարզել, արդյոք հետազոտության արդյունքում ստացված տվյալները համապատասխանում են նորմալ բաշխման պահանջին: Որպեսզի հետազոտության արդյունքները հնարավոր լինի մշակել և վերլուծել, իրականացնել փոփոխականների համեմատական վերլուծություն կամ մոդելավորում, ենթադրվում է, որ երևույթը, որը չափվում է, համապատասխանում է նորմալ բաշխման կանոնին:

Քանակական մեթոդի կիրառման ժամանակ հետազոտողը կարծես խմբավորի հասարակության ներկայացուցիչներին՝ համարելով, որ մարդիկ կամ նրանց մեծամասնությունը, միմյանց նման են, երևույթների նկատմամբ ունեն համանման կարծիքներ: Սա հաճախ կարող է քննադատվել որակական մեթոդների հետևորդների կողմից, քանի որ հաշվի չի առնվում մարդկանց անհատականությունն ու յուրահատկությունը, սակայն հենց դա է թույլ տալիս սահմանափակ թվով հարցումներ անելու արդյունքում ընդհանրացումներ անել ողջ հանրության կամ հանրության մասին:

Հասարակական երևույթների նորմալ բաշխվածությունն ավելի ակնհայտ ու տեսանելի դարձնելու համար կարելի է հղում անել անգլիացի գիտնական Ֆ. Գալթոնի պատվին անվանակոչված [«Գալթոնի տախտակին»](#): Սա տախտակ է, որի վրա իրարից հավասար հեռավորության վրա մեխեր են ամրացված: Փորձարկման ժամանակ տախտակի վերևի հատվածից գնդիկներ են լցվում, որոնք, դիպչելով մեխերին, շարժվում են ներքև: Նույնիսկ բազմաթիվ անգամներ այս փորձը կրկնելիս, արդյունքում գնդիկները տախտակի ներքևի հատվածում լցվում են նորմալ բաշխման կորի տեսքով: Յուրաքանչյուր գնդիկ հավասար հավանականություն ունի յուրաքանչյուր մեխին դիպչելիս նաև, նաև ձախ գլորվելու, բայց ճնշող մեծամասնությունը հայտնվում են նորմալ բաշխման կորի ներսում, այսինքն, մեջտեղին մոտ հատվածում: Սա կարելի է տարածել նաև մարդկային հանրության վրա. յուրաքանչյուրն ունի հնարավորություն լինել ինքնատիպ, տարբերվել մյուսներից, սակայն արդյունքում մեծամասնությունը տատանվում են այս միջին արժեքի շուրջ:

3.2. Հարցաթերթ. ինչպե՞ս կազմել: Հարցի ձևակերպումը, տեսակները

Թե՛ քանակական, թե՛ որակական հետազոտություններ իրականացնելիս պետք է հիշել, որ տեղեկատվությունը, որը մենք ստանում ենք մեծապես պայմանավորված է այն հարցերով, որոնք մենք տալիս ենք: Ինչու՞ է քանակական հետազոտության ժամանակ կարևոր ուշադրություն դարձնել հարցաթերթի կառուցվածքի ու բովանդակության՝ հարցերի ձևակերպման, հերթականության, տեսակի ընտրության վրա: Քանակական հետազոտության ընթացքում հարցազրուցավարի միջամտությունը պետք է մինիմալ լինի, նա միայն պետք է կարդա հարցերն ու արձանագրի պատասխանները: Կարևոր է հիշել, որ քանակական հետազոտության ժամանակ հարցազրուցավարները իրավասու չեն մեկնաբանություններ անելու, բացատրելու հարցերը, փոխելու հարցերի հերթականությունը կամ հավելյալ հարցեր տալու, ի տարբերություն որակական հետազոտությունների:

Հետազոտողը, հաշվի առնելով հետազոտության նպատակն ու խնդիրները, որոշում է, թե ինչ հարցեր/հարցախմբեր պետք է ընդգրկված լինեն հարցաթերթում: Հարցաթերթը

կազմելուց առաջ կարելի է նմանատիպ թեմաներով իրականացված այլ հետազոտությունների հարցաթերթեր ուսումնասիրել՝ հնարավոր հարցերի ձևակերպումների շուրջ պատկերացում կազմելու և, ինչու ոչ, որոշ հարցեր փոխառելու համար: Կարևոր է հիշել, որ հետազոտության յուրաքանչյուր խնդրի վերաբերյալ հարց/հարցախումբ է անհրաժեշտ ունենալ հարցաթերթում: Հարցաթերթը կազմելիս անհրաժեշտ է ներածական հատված ունենալ, որտեղ հարցվողին կներկայացվի հետազոտության նպատակի և այն իրականացնող կառույցի մասին: Հարցաթերթը պետք է սկսել ավելի ընդհանրական և թեթև հարցերից, որպեսզի հարցվողը կարողանա հեշտորեն մտնել թեմայի մեջ, այնուհետև անցում կատարել համեմատաբար բարդ, այսինքն, մտածելու տեղիք տվող հարցերին: Անհրաժեշտ է հիշել, որ հարցաթերթը չպետք է լինի շատ երկար: Օպտիմալ ժամանակահատվածը 20-30 րոպեն է, քանի որ մարդը դժվարանում է ուշադրությունը կենտրոնացնել հարցման թեմայի վրա դրանից առավել, ինչի արդյունքում պատասխաններն ավելի կցկտուր և պակաս նպատակային են դառնում, ինչպես նաև կտրուկ աճում է հրաժարումների թիվը (Bogen and U.S. Bureau of the Census, n.d.): Քանի որ հետազոտություն նախագծելը բավականին բարդ և ծախսատար է, հետազոտողները փորձում են իրենց հետաքրքրող բոլոր հարցերը զետեղել մի հարցաթերթում՝ առավելագույն օգուտ ստանալու համար, սակայն հիմնականում քանակի աճը որակի նվազման է բերում, և անհրաժեշտ է լավ մտածել՝ ինչ և ինչպես պետք է հարցնել:

Այսինքն, եթե նույնիսկ հարցն, ասենք, հուշում է պարունակում, ինչն ազդում է պատասխանի վրա, հարցազրուցավարը չի կարող վերաձևակերպել հարցը: Մրա արդյունքում ստացված տվյալները կլինեն ոչ օբյեկտիվ, ինչն էլ կբերի իրականացված հետազոտության որակի նվազմանը: Մեկ այլ խնդիր է անցումների մշակումը, որը ևս պետք է շատ ուշադիր անել: Անցումները ենթադրում են, որ մի հարցին կոնկրետ ձևով պատասխանածները պետք է չպատասխանեն հաջորդ հարցերին և անցում կատարեն մեկ այլ հարցի: Օրիանակ. «Նշե՛ք խնդրեմ, ունե՞ք երեխա, թե՛ ոչ» հարցին «ոչ» պատասխանողները չպետք է պատասխանեն հաջորդ՝ երեխաների մասին տվյալների ճշտմանը ուղղված հարցերի: Եթե հարցաթերթ մշակողները բաց թողած լինեն այս

անցումը, ապա երեխա չունեցողներին էլ հարցազրուցավարը ստիպված կլինի տալ հարցեր երեխաների մասին, ինչը վատ մասնագիտական մոտեցման տպավորություն կթողնի հարցվողի վրա, ինչպես նաև կմեծացնի հարցման կեսից հարցումը դադարեցնողների թիվը: Նման խնդիրներից խուսափելու համար ավելի լավ է անհրաժեշտ ժամանակ հատկացնել հարցաթերթի կազմման և փորձարկման համար:

Պետք է հիշել, որ հարցաթերթը հասարակական երևույթների չափման գործիք է, և նրանում առկա յուրաքանչյուր հարց պետք է նպատակ ունենա չափելու հետաքրքրող երևույթի մի որևէ կողմը (*Journal of Extension, 2007*):

Անհրաժեշտ ժամանակ և ջանք ներդնելը հարցաթերթի կազմման վրա իր դրական ազդեցությունն է ունենում հետազայում հավաքագրվող տեղեկատվության որակի վրա: Անկախ հետազոտության թեմայից, պարտադիր է ժողովրդագրական մաս ունենալ բոլոր հարցաթերթերում: Ժողովրդագրական հատվածում լինում են հարցեր տարիքի, սեռի, կրթության, ամուսնական կարգավիճակի և այլնի մասին: Ժողովրդագրական հատվածը հիմնականում տեղադրվում է հարցաթերթի վերջում, սակայն լինում են դեպքեր, երբ հետազոտողները նպատակահարմար են գտնում այն տեղադրել հարցման հենց սկզբում: Հարցաթերթի կազմման ժամանակ պետք է հետևել մի քանի սկզբունքի.

- հարցաթերթում հարցերը պետք է հասկանալի և պարզ ձևակերպված լինեն: Հարցմանը մասնակցում են տարբեր տարիքային խմբերի, սեռերի, մասնագիտությունների, կրթությունների ու նախասիրությունների, տարբեր սոցիալ – տնտեսական կարգավիճակներ ունեցող մարդիկ:
- Հարցադրումները ձևակերպելիս պետք է կողմնորոշվել՝ մտովի պատկերացնելով միջին կրթության, միջին ունակությունների ու ինտելեկտի տեր մարդկանց, ում համար հարցաթերթում առկա հարցերը պետք է հասկանալի լինեն:
- Հարցը պետք է ձևակերպված լինի հարցվողի մայրենի լեզվով՝ գրագետ, բայց ոչ բարդ լեզվով: Հարցվողի հետ պետք է հնարավորինս խոսել իր իսկ լեզվով, սա հեշտացնում է շփումը և հարցն ավելի հասկանալի է դարձնում:
- Հարցը պետք է լինի միանշանակ՝ համեմատելի տեղեկատվություն ստանալու համար: Այն պետք է այնպես ձևակերպված լինի, որ հասարակության տարբեր

խմբերի կողմից միանշանակորեն ընկալվի ու հասկացվի՝ առանց ավելորդ «այսինքն...», ի՞նչ նկատի ունեք»-ների: Հակառակ դեպքում, յուրաքանչյուրը կպատասխանի այն, ինչ ինքն է հասկանում այդ հարցի ներքո և համեմատելի տվյալներ չեն հավաքագրվի:

- Չպետք է օգտագործվեն բարդ, անհասկանալի, մասնագիտական տերմիններ: Մարդիկ հիմնականում չեն սիրում նշել, որ իրենք ինչ որ բան չգիտեն կամ չեն հասկանում, և ոմանք, նույնիսկ չհականալով հարցի էությունը, կնշեն պատասխաններից որևէ մեկը, ինչը ևս կնվազեցնի հետազոտության արդյունքում հավաքագրված տվյալների հավաստիությունը:
- Հարցը չպետք է լինի շատ երկար, քանի որ հաճախ մինչև հարցի վերջին հատվածին հասնելը հարցվողն արդեն մոռանում է, թե ինչի մասին էր հարցը: Որոշ դեպքերում, հարցվողը կարող է խնդրել ևս մեկ անգամ կրկնել հարցը, իսկ որոշ դեպքերում էլ՝ ցույց չտալու համար, որ անուշադիր է եղել, կարող է նշել պատասխաններից որևէ մեկը:
- Հաճախ հետազոտողները միանգամից ցանկանում են հարցնել մի քանի երևույթի մասին, և ուշադրություն չեն դարձնում, որ խախտել են հարցի կազմման ամենակարևոր սկզբունքներից մեկը, այն է՝ մեկ հարցում չի կարելի հարցնել երկու կամ ավելի գործոնների մասին: Օրինակ,- «նշեք, խնդրեմ, թե ինչպե՞ս եք վերաբերվում կանանց և երեխաների իրավունքների պաշտպաններին»: Այս դեպքում, չի իմացվի, թե հարցվողի պատասխանը հարցի ո՞ր հատվածին է վերաբերվում:
- Հարցը կազմելիս պետք է ուշադրություն դարձնել, որ այն հուշումներ կամ ուղղորդում չպարունակի: Կարևոր է, որ հարցվողը հարցին պատասխանելիս ասի այն, ինչ մտածում է, այլ ոչ թե տա այն պատասխանը, որը նրանից սպասում են կամ, որը հուշում է հարցը:
- Պետք է խուսափել ենթադրություններ պարունակող հարցերից: Սա կարող է հարցվողի մոտ հարցեր առաջացնել ոչ թե բուն հարցի, այլ հենց այդ ենթադրությունների վերաբերյալ: Օրինակ՝ «Ինչպես գիտենք մարդկանց մեծ

մասը...»:

- Հարցերը չպետք է լինեն վաղ անցյալի վերաբերյալ, չպետք է հիմնվեն հարցվողի հիշողության վրա: Այս դեպքում, պետք է կիրառել նշանակալի իրադարձությունների օրացույցը՝ փորձելով արթնացնել հարցվողի հիշողությունը:
- Հարցի կազմման ժամանակ պետք է ուշադիր լինել, որ հնարավոր պատասխանների տարբերակների համընկնումներ չլինեն: Սա կդժվարեցնի հարցաթերթի լրացումը, ինչպես նաև արդյունքների վերլուծությունը: Օրինակ՝ տարիքը պետք է գրել 18-25, 26-35 և այդպես շարունակ:

Հարցի ձևակերպումից ոչ պակաս կարևոր նշանակություն ունի հարցի **տեսակի** ընտրությունը: Առանձնացնում են հարցի հետևյալ տեսակները.

- **Փակ հարց.** այս դեպքում հարցի համար մշակվում են հնարավոր բոլոր պատասխանները և հարցվողը պարզապես պետք է ընտրի նշված տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը, կախված համապատասխան հրահանգներից: Փակ հարցերը հեշտացնում և արագացնում են հարցման ընթացքը, սակայն պետք է շատ ուշադիր լինել դրանք ձևակերպելիս, քանի որ հնարավոր է՝ լինեն դեպքեր, երբ հարցվողի նշած պատասխանը չի համապատասխանում եղած տարբերակներից ոչ մեկին: Սա նշանակում է, որ հարցի և պատասխանների մշակմանը բավարար ժամանակ չի հատկացվել: Հաճախ փակ հարց ձևակերպելու համար փոքրիկ հետազոտություն են իրականացնում՝ հասկանալու համար կա՞ն արդյոք պատասխանների այլ տարբերակներ, որոնք ձևակերպված չեն:
- **Բաց հարց.** այս դեպքում հարցը տրվում է առանց պատասխանների հնարավոր տարբերակները նշելու և ազատություն է տրվում հարցվողին պատասխանել այնպես, ինչպես նա է ուզում: Այս դեպքում վտանգ կա, որ հարցվողը կարող է թեմայից շեղվել և շատ երկար պատասխաններ տալ, ինչը երկարաձգում է ողջ հարցման ընթացքը:
- **Կիսափակ հարց.** այս դեպքում հարցից հետո նշվում է մի քանի հնարավոր պատասխան, սակայն հարցվողին հնարավորություն է տրվում այլ

պատասխան նշելու: Կիսափակ հարցը օգնության է գալիս այն ժամանակ, երբ հետազոտողը, հիմնվելով իր փորձի ու ուսումնասիրությունների վրա, նշում է բոլոր հնարավոր պատասխանները տվյալ հարցի համար, սակայն վստահ չէ, որ որևէ այլ պատասխան չի լինի:

Հարցման արդյունքների հետագա մշակման ու օգտագործման համար ամենահարմարը փակ հարցերն են, քանի որ վերջիններիս պարագայում չկա պատասխանների հետագա մշակման, կոդավորման ու խմբավորման խնդիրը: Բաց հարցերի կիրառման ժամանակ բոլոր պատասխանները առանձնացվում, խմբավորվում են՝ ըստ իմաստով իրար մոտ խմբերի և կոդավորվում: Այսինքն՝ բաց հարցի հետագա վերլուծության համար պետք է այն կոդավորել՝ դարձնել փակ հարց, ինչը բավականին ժամանակատար գործընթաց է: Կիսափակ հարցերի դեպքում բոլոր «այլ» պատասխանները մշակվում են բաց հարցերի նման:

Ինչպիսի՞ն պետք է լինի հարցաթերթը քանակական տարբեր հետազոտությունների համար:

Անհատական հարցազրույցի պարագայում հարցաթերթը կարող է համեմատաբար երկար լինել, հարցերը՝ բազմազան ու բարդ: Քանի որ շփումն այստեղ դեմ առ դեմ է, հարցվողները հաճախ անհարմար են զգում հրաժարվելու հարցմանը մասնակցելուց կամ կեսից դադարեցնելու հարցերին պատասխանելը: Բարդ հարցերի դեպքում, հարցվողը կարող է խնդրել մեկ անգամ ևս կարդալ հարցը, իսկ եթե շփումը դեմ առ դեմ չլիներ, անհասկանալի հարցի հանդիպելիս հարցվողների հիմնական մասը կդադարեցներ հարցաթերթը լրացնելը:

Հեռախոսային հարցման պարագայում հարցաթերթում հարցերը պետք է ավելի կարճ և հեշտ ընկալելի լինեն: Հակառակ դեպքում, հարցվողը յուրաքանչյուր պահի կարող է հեռախոսն անջատել և զանգերին չպատասխանել:

Փոստային հարցման պարագայում հարցերը պետք է հեշտ լինեն, պարզ, իսկ հարցաթերթի լրացման սկզբունքները մանրամասն նշված լինեն հարցաթերթում: Հրահանգների պարզ ու հստակ ձևակերպումը շատ կարևոր է, քանի որ հարցվողը մասնագետ չէ, և հնարավոր է, որ առաջին անգամ է լրացնում նման ձևաթուղթ: Առավել

մեծ ուշադրություն պետք է դարձնել հարցից հարց անցումներին:

Առցանց (online) հարցման պարագայում հարցերը պետք է հասկանալի և հեշտ ընկալելի լինեն: Հարցաթերթի լրացման սկզբունքները պետք է մանրամասն ներկայացված լինեն: Առցանց հարցաթերթը պետք է շատ երկար ու բարդ չլինի, քանի որ քչերը ժամանակ կհատկացնեն այն լրացնելու համար:

Քանակական հետազոտության հարցաթերթերում ամենահաճախը կիրառվում են փակ հարցերը, քանի որ դրանք հարմար են արդյունքների հետագա մշակման և վերլուծության համար:

Հարցերը ձևակերպելիս, հասարակական երևույթների չափման համար, օգտագործվում են սանդղակների հետևյալ տիպերը. նոմինալ, կարգային, մետրիկական/ինտերվալային:

Նոմինալ - Չդասակարգված, իրար բացառող խմբեր: Օրինակ՝ սեռը. 1-արական, 2-իգական: Ո՞րն է Ձեր ամենասիրած գույնը՝ 1-սպիտակ, 2-սև, 3-դեղին, 4-կարմիր և այլն:

Կարգային - Հասարակական երևույթների չափման համար ամենահաճախ կիրառվող կարգային սանդղակը Լիկերտի սանդղակն է (Sullivan and Artino, 2013): Սա դասակարգված, մեծի-փոքրի, շատի-քչի հարաբերություն ունեցող սանդղակ է:

Առավել հաճախ կիրառվում է Լիկերտի սանդղակի 5 կարգ ունեցող տարբերակը, ոմանք նախընտրում են 7 կամ 9 կարգ ունեցող տարբերակները: Սա կախված է ուսումնասիրվող երևույթի առանձնահատկություններից, հետազոտողի նախասիրություններից և նրանից, թե հատագայում ինչ տիպի վերլուծություն է նախատեսվում իրականացնել: Ստորև ներկայացված է կարգային հարցի մեկ օրինակ՝ 5 կարգով կամ բալով:

Որքանո՞վ եք բավարարված Ձեր աշխատանքով:

1. Լիովին բավարարված եմ
2. Ավելի շուտ բավարարված եմ
3. Ոչ բավարարված եմ, ոչ էլ բավարարված չեմ (չեզոք)
4. Ավելի շուտ բավարարված չեմ
5. Ընդհանրապես բավարարված չեմ

Ինտերվալային – Հավասար կամ ոչ հավասար միջակայքերի բաժանված պատասխաններ ենթադրող հարցեր, որտեղ հստակ սահմանված են չափման

միավորները: Սրա տեսակ է հարաբերությունների սանդղակը (Koch *et al.*, 1996): Օրինակ՝ տարիքը, եկամուտը, ժամանակը և գինը այնպիսի փոփոխականներ են, որոնք կարող են չափվել ինտերվալային սանդղակով:

3.3. Ներկայացուցչականություն, պատահական թվերի աղյուսակ և ընտրանքի հաշվիչ

Քանակական հետազոտության շրջանակներում հետազոտողներն իրականացնում են սահմանափակ թվով հարցումներ, այնուհետև ընդհանրացնում են այդ տվյալները ողջ հանրության համար: Ինչպե՞ս է դա հնարավոր: Հասարակագիտությունը, քանակական հետազոտության իրականացման տեսանկյունից, լայնորեն օգտագործում է մաթեմատիկական հաշվարկային համակարգերը՝ հստակորեն հաշվարկելով, թե տվյալ հանրության համար քանի հոգու հետ պետք է իրականացնել հարցում, որպեսզի կարողանան ընդհանրացնել տվյալները ողջ հանրության վրա:

Իզուր չեն քանակական հարցումները նաև անվանվում ընտրանքային հետազոտություններ:

Հետազոտության հիմնախնդրի բոլոր կրողները կազմում են տվյալ հետազոտության **գլխավոր համախմբությունը**: Եթե խոսում ենք հանրային որևէ հիմնախնդրի մասին, ապա գլխավոր համախմբությունը ողջ հանրությունն է, եթե քննարկում ենք ուսանողների ընկալումները այս կամ այն հասարակական կամ քաղաքական երևույթի շուրջ, ապա գլխավոր համախմբությունը կլինեն բոլոր ուսանողները, եթե հիմնախնդիրը կապված է քաղաքական ընտրությունների հետ, ապա գլխավոր համախմբությունը կլինեն բոլոր ընտրելու իրավունք ունեցողները և այլն:

Ընտրանքային համախմբությունը գլխավոր համախմբության այն հատվածն է, ում հետ իրականացվում են հարցումները: Ընտրանքային համախմբությունը չի կարող լինել գլխավոր համախմբությունից դուրս: Ընտրանքային համախմբությունը առավելագույնս ներկայացնում է գլխավոր համախմբությունը՝ թե՛ ըստ կառուցվածքի, թե՛ ըստ

առանձնահատկությունների (կախված հետազոտության՝ թեմայից հետաքրքրող առանձնահատկությունները կարող են փոխվել):

Որպեսզի կարողանանք վստահությամբ պնդել, որ գլխավոր համախմբությունն ունի այս կամ այն կարծիքը ուսումնասիրվող խնդրի շուրջ, պետք է հարցնենք գլխավոր համախմբության բոլոր ներկայացուցիչների կարծիքները: Սակայն դա կպահանջի ֆինանսական, մարդկային և ժամանակային հսկայական ռեսուրսներ, որոնք ոչ բոլորը կարող են իրենց թույլ տալ: Այս խնդրի լուծումը որակյալ կերպով արված ընտրանքն է՝ ընտրանքային համախմբության որոշակիացումը: Ընտրանքի կազմումը իրականացվում է հատուկ տեխնիկաների ու բանաձևերի միջոցով՝ հաշվի առնելով որոշ ցուցանիշներ, ինչպիսիք են գլխավոր համախմբության չափն ու կառուցվածքը, ցանկալի հավաստիության աստիճանը և թույլատրելի շեղման աստիճանը (Raosoft, 2004): Հավաստիության աստիճանը չափվում է տոկոսներով և թույլ է տալիս ասել, թե քանի տոկոս հավանականությամբ կարելի կլինի ընտրանքային համախմբության համար արված վերլուծությունները տարածել գլխավոր համախմբության վրա: Հասարակագիտական հետազոտության պարագայում հիմնականում ընտրում են 95% հավաստիության աստիճանը: Շեղման չափը նույնպես չափվում է տոկոսներով, սակայն այստեղ թվի մեծությունը պետք է ավելի փոքր լինի, 2-5%: Այս թիվը նկարագրում է, թե ստացված արդյունքները որքանով կարող են շեղվել գլխավոր համախմբության իրական պատկերից (Sullivan, n.d.):

Օրինակ, հարցումների արդյունքում պարզվել է, որ ԱԺ թեկնածու Պ.Պ.-ն կստանա ընտրողների 60%-ի քվեները: Եթե շեղման աստիճանը 2.5% է, իսկ հավաստիության աստիճանը 95%, ապա կարող ենք ասել, որ 95% հավանականությամբ Պ.Պ.-ն համազգային ընտրությունների արդյունքում կստանա 60% +/- 2,5% ընտրողների քվեները:

Սակայն միայն ընտրանքային համախմբության թիվը հստակ հաշվելը բավարար չէ, որպեսզի ընդհանարացումներ արվեն գլխավոր համախմբության մասին: Որպեսզի հետազոտությունը լինի ներկայացուցչական, այսինքն՝ ընտրանքային համախմբությունը

ներկայացնի գլխավոր համախմբությունը, անհրաժեշտ է հետևել պատահականության սկզբունքին, այսինքն՝ յուրաքանչյուր հարցվող, ում հետ պետք է իրականացվի հարցում, պետք է ընտրված լինի պատահականորեն և գլխավոր համախմբության յուրաքանչյուր ներկայացուցիչ պետք է ընտրանքային համախմբությունում ընդգրկվելու հավասար հնարավորություն ունենա: Պատահականության սկզբունքն ապահովելն անհրաժեշտ է ինչպես տնային տնտեսությունների ընտրության, այնպես էլ յուրաքանչյուր տնային տնտեսությունից հարցվողին ընտրելու ժամանակ: Տնային տնտեսությունների պատահական ընտրությունն ապահովելու համար կիրառվում են տարբեր մեթոդներ, օրինակ, գլխավոր համախմբության ներկայացուցիչների ընդհանուր հասցեացանկից պատահական ընտրություն, պատահական քայլի մեթոդը և այլն (Gravetter and Forzano, 2008): Պատահականորեն ընտրված տնային տնտեսությունում հարցվողի ընտրությունը ևս պետք է պատահական լինի: Եթե կան հարցվողի որոշակի չափանիշներ, որոնց նա պետք է համապատասխանի, ապա պետք է առաջնորդվել այդ չափանիշներով, բայց եթե նույն տնային տնտեսությունում հանդիպում են մի քանի մարդ, ովքեր բավարարում են այդ չափանիշներին, ապա նրանց մեջ ընտրությունը պետք է նույնպես պատահական լինի՝ չի կարելի հարցումն իրականացնել այն ռեսպոնդենտի հետ, ում առավել հարմար է մասնակցել: Սա արվում է մի քանի մեթոդով, օրինակ՝ նախորդ կամ հաջորդ ծննդյան օրվա մեթոդով, Քիշի աղյուսակի (Hoffmeyer-Zlotnik, 2003) օգնությամբ և այլն: Դաշտային աշխատանքներից առաջ հետազոտական խումբը կամ ընտրանքի մասնագետը որոշում են, թե որ մեթոդով են առաջնորդվելու հարցազրուցավարները հետազոտության ողջ ընթացքում և այդ մեթոդից շեղվելն անթույլատրելի է, քանի որ դա ազդեցություն կունենա արդյունքների և ընտրանքի կառուցվածքի վրա:

Հարցվողին պատահականորեն ընտրելու համար կարող ենք կիրառել պատահական թվերի աղյուսակը (Rand Corporation, 1955), որը պատահական թվերի շարք է, որն օգնում է իրականացնել պատահական ընտրանք: Այս աղյուսակը կիրառելի է համեմաբատաբար փոքր խմբերում ընտրանք անելու համար: Մեծ համախմբությունների դեպքում օգնության են գալիս համակարգչային վիճակագրական ծրագրերը, սակայն պետք է նշել,

որ բոլոր այս ծրագրերով պատահական ընտրանքն իրականացվում է հիմք ընդունելով պատակահան թվերի աղյուսակը:

3.4. Քանակական տվյալների մշակում, վերլուծություն և ներկայացում:

Քանակական հետազոտության դաշտային փուլի ավարտից հետո հաջորդ քայլը տվյալների մշակումը, մաքրումն ու պատրաստումն է վերլուծության համար: Եթե հարցումներն իրականացվել են թղթային հարցաթերթերով, ապա նախ իրականացվում է բաց հարցերի փակում, կողավորում, այնուհետև տվյալների մուտքագրում: Համակարգչային տեխնիկայի կիրառմամբ իրականացված հետազոտության դեպքում տվյալները ավտոմատ կերպով տեղափոխվում են վիճակագրական ծրագիր, որից հետո նոր իրականացվում է բաց հարցերի փակում, կողավորում, տվյալների մաքրում: Լրացված հարցաթերթերի մշակման ժամանակ կարող են հանդիպել սխալ լրացված հարցեր, բացթողումներ և այլ սխալներ, որոնք պետք է կամ շտկել կամ կողավորել որպես հարցազրուցավարի կամ այլ տիպի սխալ: Վիճակագրական վերլուծական ծրագրերում անհրաժեշտ է ներմուծել բոլոր հարցերի անվանումները, մուտքագրվող տեղեկատվության տեսակը, այսինքն՝ ստեղծել հարցաթերթի էլեկտրոնային տարբերակը, որում կլինեն հարցման բոլոր մասնակիցների պատասխանները: Տվյալների մեխանիկական ստուգումից հետո իրականացվում է տվյալների տրամաբանական ստուգում, որից հետո միայն կարող է սկսվել տեղեկատվության վերլուծության և արդյունքների ներկայացման մասին:

Քանակական տվյալների վերլուծությունը պետք է սկսել հաճախականությունների ուսումնասիրությունից: Սա թույլ է տալիս ընդհանուր պատկերացում կազմել երևույթի տարածման, կենտրոնական միտումների վերաբերյալ, ինչի արդյունքում հստակեցվում է, թե ինչ ուղղությամբ պետք է ընթանան հետագա վերլուծությունները: Հաճախականությունների ուսումնասիրությունը միաչափ է, քանի որ դիտարկվում է կոնկրետ մի փոփոխական, որից հետո կարող եք իրականացնել երկչափ ուսումնասիրություն՝ համեմատելով 2 տարբեր փոփոխականներ: Այս դեպքում

ուսումնասիրում ենք մի փոփոխականի բաշխումն ըստ մեկ այլ փոփոխականի: Օրինակ, երկիրը լքել ցանկացողների բաշխումը՝ ըստ սեռի, տարիքի, եկամուտների կամ այլ փոփոխականի, որն ավելի հետաքրքիր է կոնկրետ հետազոտության շրջանակներում: Սա անում են խաչաձև աղյուսակների դուրս բերման միջոցով, որը նաև թույլ է տալիս հասկանալ, թե տվյալ փոփոխականների միջև կա արդյոք վիճակագրորեն նշանակալի կապ: Տարբեր փոփոխականների միջև կապի ուսումնասիրություն կարող ենք անել կոռելացիոն/համակցային ուսումնասիրություն, որը ցույց է տալիս՝ արդյոք փոխկապակցված են փոփոխականները և եթե փոխկապակցված են, ապա ինչ ձևով, ինչ ուժգնությամբ ու ինչ ուղղությամբ: Օրինակ՝ մեկի աճը բերում է մյուսի աճին կամ մեկի աճը բերում է մյուսի նվազմանը (Statistics Solutions, 2018):

Ավելի բարդ և բազմաչափ վերլուծություններ անելու համար նախ և առաջ պետք է առանձնացնել **կախյալ և անկախ փոփոխականները**, որոնց ուղղված է վերլուծությունը: Փոփոխականները կախյալ կամ անկախ են կոնկրետ վերլուծության կոնկրետ մոդելի համար: **Կախյալ կամ արդյունք-փոփոխականի** վրա ազդում են **անկախ կամ կանխորոշ փոփոխականները**: Կոնկրետ մոդելի կազմման ժամանակ հնարավոր է վերլուծել մի քանի անկախ փոփոխական, որոնց ազդեցությունն էլ ենթարկվում է վերլուծության (Leard Statistics, 2013):

Վիճակագրական վերլուծության ժամանակ առաջադրվում են գրոյական և ալտերնատիվ վարկածներ: **Զրոյական վարկածը (H_0)** ենթադրություն է, որ կախյալ և անկախ փոփոխականների միջև ոչ մի վիճակագրորեն նշանակալի կապ չկա: **Ալտերնատիվ վարկածը (H_1)** ենթադրություն է, որ կախյալ և անկախ փոփոխականների միջև նշանակալի կապ կա: Վարկածների հաստատումն ու հերքումը իրականացվում է վիճակագրական ծրագրերում՝ հատուկ վիճակագրական թեստերի անցկացման միջոցով (Leard Statistics, 2013):

Բազմաչափ վերլուծություններ անելիս հնարավոր է օգտագործել ռեգրեսիոն վերլուծությունը (Leard Statistics, 2013), կլաստերային (Statistics Solutions, 2018), գործոնային (Factor Analysis in SPSS, n.d.) կամ այլ տիպի վերլուծություններ, որոնք հասանելի են բոլոր վիճակագրական վերլուծական համակարգչային ծրագրերում:

Այստեղ ավելի կարևոր է ստացված արդյունքների ճիշտ և լայն հանրության համար հասկանալի մեկնաբանությունը, կախյալ և անկախ փոփոխականների ճիշտ ներկայացումը, քանի որ, լինելով ավելի բարդ ու բազմաչափ, վերլուծական այս մեթոդներն ու մոդելները դժվար են ընկալվում և մեկնաբանվում:

Քանակական հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կարևոր է շեշտը դնել հետազոտության տվյալների վիզուալացման վրա: Քանի որ ներկայացվում են թվեր, պետք է ընդգծել դրանց բաշխվածությունը և համեմատությունը, այդ թվերը հնարավոր է պատկերավոր և տպավորիչ կերպով ներկայացնել: Գծապատկերներն ու աղյուսակները շատ ավելի հեշտ են ընկալվում, քան տեքստային տեղեկատվությունը: Հնարավորության դեպքում, ավելի լավ է պատկերավոր ներկայացնել հետազոտության արդյունքները, տարբեր երևույթների բաշխվածությունն ու համեմատությունը: Վիճակագրական վերլուծական ծրագրերը բազմազան հնարավորություններ են տալիս տեղեկատվությունը տեսանելի դարձնելու համար ինչպես միաչափ վերլուծության, այնպես էլ բազմաչափ վերլուծության համար: Պարզ հաճախականությունների և երկու տարբեր փոփոխականների փոխկապվածության ներկայացման համար կարելի է օգտագործել ինչպես աղյուսակներ, այնպես էլ գրաֆիկական պատկերներ: Բազմաչափ վերլուծության համար օգտագործվում են հենց մոդելի աղյուսակային նկարագիրը, որում մանրամասնորեն նշված են լինում կախյալ և անկախ փոփոխականների միջև կապերի բնույթը, մանրամասն տրվում է մոդելի վիճակագրական նկարագրությունը: Եթե միաչափ ու խաչաձև աղյուսակները բավականին պարզ են, հեշտ ընկալելի և կարիք չկա շատ մանրամասն դրանք մեկնաբանելու, ապա մոդելների աղյուսակների համար պետք է շատ մանրամասն նկարագրություն տալ՝ այն ավելի հասկանալի դարձնելու համար:

3.5. Քանակական հետազոտական տվյալների համակարգչային վերլուծության ծրագրեր

Եթե նախկինում, մինչև համակարգիչների լայն տարածում գտնելը թե՛ որակական, թե՛ քանակական հետազոտությունները ամփոփվում և վերլուծվում էին «ձեռքով», ապա

այսօր երկուսի համար էլ կան մշակված մի քանի համակարգչային վերլուծական ծրագրեր, որոնք նախ հեշտացնում են տվյալների վերլուծությունը, ապա խնայում են ժամանակը՝ թույլ տալով ավելի շատ ժամանակ հատկացնել բուն վերլուծությանը և ոչ թե տվյալների մուտքագրման, մշակման, հաշվարկման վրա: Նման ծրագրերի կիրառումը մեծացնում է հաշվարկների ճշտությունը՝ վերլուծությունը դարձնելով ավելի բազմակողմանի, ստույգ և արժանահավատ:

Կան բազմաթիվ համակարգչային ծրագրեր քանակական տվյալների վերլուծության համար, օրինակ՝ [SPSS](#), [SAS](#), [R](#), [Stata](#), [Statistica](#) և այլն: Այս բազմազան ընտրության մեջ յուրաքանչյուր հետազոտող ինքն է որոշում՝ որ ծրագրով աշխատել: Ծրագրերը հիմնականում նմանատիպ գործառույթներ են իրականացնում: Այսօր զարգացող աշխարհի պահանջներին համապատասխանելու համար այս ծրագրերն էլ անընդհատ թարմանում ու կատարելագործվում են, բոլորն էլ հազեցած են «օգնության» լայն հնարավորություններով: Նման ծրագրերի օգնությամբ շատ արագ կարելի է անել տվյալների մաքրում ու մշակում, ինչպես նաև հետագա վերլուծություն: Վիճակագրական ծրագրերը իրականացնում են ինչպես պարզ հավանականությունների ստույգ հաշվարկներ, իսաչաձև համեմատություններ՝ վիճակագրական նշանակալի կապի հաշվարկով, այնպես էլ բազմաչափ վիճակագրական մոդելավորում՝ համապատասխան աղյուսակների ներկայացմամբ: Այս ծրագրերը կարող են կիրառել նաև նրանք, ովքեր չունեն սոցիոլոգիական, վիճակագրական կամ տնտեսագիտական կրթություն, սակայն հստակ պատկերացնում են, թե ինչ են ուզում հետազոտել: Տարբեր վարկանիշային համակարգերում այս կամ այն ծրագիրը գտնվում է տարբեր հորիզոնականներում:

Հղումներ

- Academic Coaching and Writing LLC (2017) Writing a literature review. [Online] Available at: <https://www.academiccoachingandwriting.org/dissertation-doctor/resources/writing-a-literature-review> [Accessed 05.06.2017].
- Armed with Science (2010) How to: Defining Your Research Questions and Hypotheses. [Online] Available at: <http://science.dodlive.mil/2010/10/04/defining-the-beginning-importance-of-research-questions-hypotheses/> [Accessed 05.06.2017].
- Bogen, K., U.S. Bureau of the Census (n.d.) The Effect of Questionnaire length on Response Rates – A Review of the Literature. [Online] Available from: <https://www.census.gov/srd/papers/pdf/kb9601.pdf> [Accessed 16.03.2018].
- Bryman, Alan. “The Research Question in Social Research: What is its Role?” *International Journal of Social Research Methodology* 10 (2007): 5-20.
- Cambridge University Press (2017) Definition of “researcher” from the Cambridge Business English Dictionary [Online] Available at: <http://dictionary.cambridge.org/dictionary/english/researcher> [Accessed 01.06.2017].
- Clipart (2016) Question Mark <http://cliparting.com/free-question-mark-clip-art-7629/>
- Cory, T., and Slater T. (2003). Brainstorming. Techniques for new ideas. Lincoln, NE: iUniverse Inc.
- Cresswell, W. J. (2014) Research Design: Qualitative, Quantitative, and Mixed Methods Approaches. CA; London, New Dehli: Sage publications.
- Dreamstime (2000-2018). Multiethnic People Holding Hands with Chart. [Online] Available from: Ebm (2014). Principles and Methodology of Evidence-Based Medical Science. [Online] Available from: <https://goo.gl/images/3d3342> [Accessed 16.03.2018].
- Factor Analysis in SPSS (n.d.) [Online] Available from: <https://www.researchgate.net/file.PostFileLoader.html?id=57c071dc3d7f4bff9f370018&assetKey=AS%3A399375101644800%401472229852578>. [Accessed 15.03.2018].
- Flick, U. (2014). An Introduction to Qualitative Research. London: Sage.
- Galvan, J. (2006). *Writing literature reviews: a guide for students of the behavioral sciences* (3rd ed.). Glendale, CA: Pyczak Publishing.
- Gravetter, J. F. and Forzano, L.-A. B. (2008). Research Methods for the Behavioral Sciences (3rd, Third Edition). Content available online: <http://www.gbv.de/dms/ilmnau/toc/611938588.PDF>. [Accessed 16.03.2018].
- Hammersley and Atkinson (1983). Ethnography. Principles in Practice. London. Tavistock.
- Hoffmeyer-Zlotnik, H. P. J. (2003) New Sampling Designs and the Quality of Data. [Online] Available from: <https://www.stat-d.si/mz/mz19/hoff.pdf> [Accessed 10.03.2018].
- <https://www.dreamstime.com/stock-photo-multiethnic-people-holding-hands-chart-group-image43739848>. [Accessed 20.01.2018] (Reference to the Cover Photo).
- Jones, K. (2011). The Practice of Quantitative Methods. [Online] Available from: <https://goo.gl/ggB78W> [Accessed 16.03.2018].

- Journal of Extension (2007) Tips for Developing and Testing Questionnaires/Instruments. [Online] Available from: <https://joe.org/joe/2007february/tt2.php> [Accessed 16.03.2018].
- Koch, W. et al. (1996) Rasch Measurement Transactions, 9 (4), p.457. [Online] Accessed from: <https://www.rasch.org/rmt/rmt94b.htm>. [Accessed 17.03.2018].
- Leard Statistics (2013). Linear Regression Analysis Using SPSS Statistics. [Online] Available from: <https://statistics.laerd.com/spss-tutorials/linear-regression-using-spss-statistics.php> [Accessed 15.03.2018].
- Leard Statistics (2013). Types of Variable. [Online] Available from: <https://statistics.laerd.com/statistical-guides/types-of-variable.php> [Accessed 11.03.2018].
- Littig, B. (2013). Expert Interviews. Methodology and Practice. IASR Lecture Series. [Online] Available at: [http://www.uta.fi/iasr/lectures/index/17.9.2013 Beate%20Littig Tampere%20Expert-Interviews.pdf](http://www.uta.fi/iasr/lectures/index/17.9.2013%20Beate%20Littig%20Tampere%20Expert-Interviews.pdf) [Accessed 13.06.2017].
- Marczyk, G. R., DeMatteo, D., and Festinger, D. (2010) Essentials of Research Design and Methodology. NJ: John Wiley & Sons.
- Merriam-Webster (2017) Definition of Research [Online] Available at: <https://www.merriam-webster.com/dictionary/research> [Accessed 29.05.2017].
- Nancy R. Tague's *The Quality Toolbox*, Second Edition, ASQ Quality Press, 2004, pages 364–365.
- Oxford University Press (2017) Definition of *hypothesis*. [Online] Available at: <https://en.oxforddictionaries.com/definition/hypothesis> [Accessed 05.06.2017].
- Rand Corporation (1955). Random Number Tables. [Online] Available from: <https://www.nist.gov/sites/default/files/documents/2017/04/28/AppenB-HB133-05-Z.pdf> [Accessed 12.03.2018].
- Raosoft (2004). Sample size calculator. [Online] Available from: <http://www.raosoft.com/samplesize.html> [Accessed 15.03.2018].
- Statistics Solutions (2018). Cluster Analysis. [Online] Available from: <http://www.statisticssolutions.com/cluster-analysis-2/> [Accessed 12.03.2018].
- Statistics Solutions (2018). Correlation (Pearson, Kendall, Spearman). [Online] Available from: <http://www.statisticssolutions.com/correlation-pearson-kendall-spearman/> [Accessed 13.03.2018].
- Statistics Solutions (2018). Null Hypothesis and Alternative Hypothesis. [Online] Available from: <http://www.statisticssolutions.com/null-hypothesis-and-alternative-hypothesis/> [Accessed 15.03.2018].
- Steenhouse, L. (1978) Applying Research to Education [Online] Available at: <https://www.uea.ac.uk/documents/4059364/4994243/Stenhouse-1978-Applying+Research+to+education.pdf/24ec7b40-ac56-46d2-8f8f-2bb7b4c53ac4> [Accessed 30.05.2017].
- Sullivan, G. M and Artino, A.R. (2013) Analyzing and Interpreting Data From Likert-Type Scales. [Online] Available from: <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC3886444/> [Accessed 17.03.2018].
- Sullivan, L. (n.d.) Confidence Intervals. [Online] Available from:

<http://sphweb.bumc.bu.edu/otlt/MPH->

[Modules/BS/BS704 Confidence Intervals/BS704 Confidence Intervals print.html](http://sphweb.bumc.bu.edu/otlt/MPH-Modules/BS/BS704_Confidence_Intervals/BS704_Confidence_Intervals_print.html)

[Accessed 10.03.2018].

University of Southern Maine (n.d.) In-depth interview protocol. Available at:

<http://muskie.usm.maine.edu/specialneeds/PDFs/Parentinterviewprotocol.pdf> [Accessed 08.06.2017]

USC University of Southern California (2017) Organizing Your Social Sciences Research Paper: The Research Problem/Question. [Online] Available at:

<http://libguides.usc.edu/writingguide/introduction/researchproblem> [Accessed 02.06.2017].

Թադևոսյան, Գ. (2006): Որակական Սոցիալական Հետազոտություններ: Երևանի համալսարանի հրատակչություն: